Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3958

2448

6 / IV 222.

956 4/93

# [illegible] ՀԱՅՐԵՆԵԱՑ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

ՅԵՐԿՈՒՍ ԱՐԱՐՈՒԱԾՍ

ՇԱՐԱԳՐԵԱՑ

ԳՐԻԳՈՐ Օ. ԱԹԸՆԹՕՓԵԱՆ

[illegible] цензурою. С. Петербургъ, 18 Декабря 18..

ՌՈՍՏՈՎ (*Դօնի վերայ*)

ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՏԷՐ-ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

1875—ՌՅԻԴ

Ի ԳՐՈՑ
ՃԵՄԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
Թ. 116

Дозволено цензурою. С. Петербургъ, 13 Декабря 1874 г.

## ԽՕՍՈՂՔ

Պետրոս աղա, 26 ամաց ծերունի վաճառական.

Մարտիրոս, բարեկամ Պետրոսի.

Գաբրիէլ Բաբելեան, կանտիտատ համալսարանի.

Ստեփաննոս, որդի Պետրոս աղայի.

Միքայէլ Բաբելեան, եղբայր Գաբրիէլի, գնդապետ զօրաց.

Սարգիս, Պետրոս աղայի եղբօրորդին.

Կիրակոս, ծառայ Պետրոս աղայի.

Զինուոր, գնդապետին պահապանը.

Չորս հարիւրապետ և դրօշակիր զինուոր գնդին:

# ԳԻՏԵԼԻՔ

Տեսնելով շատերու թէ՛ մեր ազգի և թէ այլոց Ռուսաց հպատակաց մէջ առանց գործի իմաստը հասկանալու լալը և ողբալը այս նոր գովելի զինուորական կարգադրութեան մասին, պարտ անձին համարեցի ի լոյս ընծայել զայս փոքրիկ աշխատութիւնս, և այնու, գոնեա մասամբ, պարզաբանել յիշեալ կարգադրութեան բարի նպատակը, միանգամայն և ծանուցանել թէ որպէս ամենայն հարազատ զաւակաց, նոյնպէս առաւել ևս մեր Հայ ազգի զաւակաց, անհրաժեշտ սուրբ պարտք է հայրենեաց սիրով վառեալ զայն պաշտպանելու համար՝ անտրտունջ և սիրով զոհել իւրեանց զաւակները։

Այսպ ուրեմն, քաջ ճանաչելով Ռուսաց Օգոստոս Կայսեր քանի ու քանի մեզ արած բարիքները, խնդրեմ ազգիս Հայոց ուշադրութեամբ ընթեռնուլ զայս տետրս և ապա ամեն կասկած և ցաւ սրտերէն հանելով, թող մեզ հետ միաբերան գոչեն. „Կեցցէ Օգոստոսափառ Ռուսաց Կայսրն Աղէքսանդր Բ, զի որպէս նա սիրեր և սիրէ զմեզ և զանձն իւր դնէ ի վերայ մեր ամենեցունց, նոյնպէս և մեք վառեալ հայրենեաց սիրով պատրաստ եմք թշնամեաց գլուխը անյաղթ սրով յերկիր թաւալել։

# ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

## ՏԵՍԻԼ Ա.

*(Սենեակը պէտք է զարդարել եւրոպական ձեւով, իբրեւ հիւրընդունարան* (гостинная) *և բազմարանին վրայ տանուտէր ծերունի Պետրոս աղան նստած քթախոտը կքաշէ ու թաշկինակով բերանը ծածկելով կփռըշտայ. այդ միջոցին դուրսի դռնէն Մարտիրոսը ներս կմտնի.)*

Մ. (Գլուխ տալով) Բարեւ ձեզ, իմ Պետրոս աղաս, ի՞նչպէս տաճա՛, ո՞ղջ առո՞ղջ...

Պ. (Ոտքերը ցուցնելով) Ո՛ . . . Աստուծոյ բարին, բարի եկար պարոն Մարտիրոս. ո՞ւր է, արի նստի նայիմ, աստ նայիմ, ինչ նոր խապեր:

Մ. (Սեղանին մօտ աթոռին վերայ նստելով) Փառք Աստուծոյ, ինչ նոր խապեր պիտի ըլլայ.

հրամանքդ ինչպէս ես. պալա, չալա, աղէկ, ո՞ւր տունին:

Գ.— Գոհութիւն Աստուծոյ, թէպէտ անցած օրեր քիչ մը փոքր մանչս քեփը աւրիլ էր ամա, բժիշկ հասուցի, նայեցաւ ճար տուեց, քիչ մը աչքը բացածի պէս եղաւ, երէկ ու այսօր տունին մէջը սկսաւ կամաց կամաց քալել:

Մ.— (Զարմանալով) Ի՞նչ կասես, Պետրոս աղա. ո՞ր մանչդ:

Գ.— Արմէնս տուհա. մախտումը տառ-հալաթ խալսեցաւ, մա՛զ մնաց պիտի երթար. պէրէքեաթ վերսին բժիշկը վերայ կուլխու հասուցի ու....

---

## ՏԵՍԻԼ Բ.

Ս.— (Ներս կմտնէ, հօրը դառնալով) Հայր իմ, խանութը փոխթաւը եկաւ ու ГДѢ папаша? տէրն հարցուց:



Գ.— Չհարցուցի՞ր ինչու համար ինծի կուզէ:

Ս.— Հարցուցի. ասաց որ ժամանակը մօտենալու վերայ է, „ինչու մինչև այսօր սէմէյնիկ ափիսօքը փռէտսաթավիթ չանիր, ինձմէ բարև արա պապիդ, խնդրեմ շատ թող չուշացնէ“ ասաց:

(Այս միջոցին Մարտիրոսը ծխախոտը հանելով կոկոխ ծխել):

Գ.— Աղէկ, այնպէս է նէ՝ դու գնա՛, ես կտեսնուիմ նորա հետ:

Ս.— (Ծոխելով կերլիայ) Ճշմարիտ չգիտեմ, որ տեղ ձգուիլ է նոր վաճնի փավինոսթի գիրքը, ամէնիշ փող տուիլ առիլ էինք:

Գ.— (Բարկանալով) Ստեփան, հօս արի հա՛ս. ո՞ր գիրքն է ուզեցածդ:

Ս.— (Ներս մտնելով) Խանութը մինակ թո-

զուցել եմ. խնդրեմ շուտ ասա՛, ի՞նչ պիտի ասիս:

Գէ. (Հանդարտութեամբ) Չէ՛ որդի չէ, ասելու բան չունիմ, միայն թէ գիրք ասիր նէ՝ արդեօք ո՞ր գիրքն է ուզեցածդ:

Ս. (Ուրախացընելով) Ի՛քը տաճա. ինա ուսունակ գրուած սալտաթութիւնի համար գրուած է նէ՞:

Գէ. (Տխրած) Հա՛... այն գիրքը կուզես, այն մէկալ կօճնաթը սեթօլին վրայ դրված պէտք է ըլլայ, ա՛ռ ու շուտ խանութ կըրնա՛:

Ս. (Կուզն դուռը ծածկելով) Հազիր խանութը կկարդամ ու մէջէն բան մը կիմանամ:

Սար. (Առ Գէորգ) Գէտրոս աղա. ա՛ֆֆէրիմ, ամա մօլտեց տղայ է. տեսա՞ր ինչ ասել է ուսում ասելը, մեզի պէս կոյր մնացած չէ ալ պարեմ. Ճանըմ Գէտրոս աղա, մէկ կիր կարդացնելու համար ինչքան նեղութիւն կքաշինք, ատ կէնէ տէ զարար չունի, նէխսէ կարդացողը կգտնենք, մէմալ որ կարդաց երկուսս ալ մոխկ անողը ըլլանք, չեղածիքէն մեզի պէս մէկքանին ալ քովերս ըլլան, ի՞նչ կհասկընանք այն կարդացածէն. հէյ կիտի ուսում. երանի՜ քեզի Գէտրոս աղա, որ ատ պզը զաւակ մեծցուցիլ իս, հէմ կրցածիդ չափ ուսում ալ տալ տուիլ իս, զէրէ կիտե՞ս, իլէ այս դարերուս մէջ, խա՛ ռուսնակ լեզուն կա՛յ եա, ամէն բանի մէջ մեզի հարկաւոր է:



Գէ. (Ուրախացընելով) Ի՜, հարցնէր չի մէյմնալ ինծի, քանիո՞վ եղաւ ատ ուսումը. ի՞նչ թահմին կանիս, պէտահվա՞յ կըլլայ ատխատար բանը:

Սար. (Զարմանալով) Ո՛վ կասէ որ պէտահվայ կըլլայ տէ՞ի՛ ամա, նէուժէ՞լի մեր պա-

պաները առջևի ճէպերը փարայ չու-
նէին, որ մեզի այսպէս կէս մարդ . . .
Գ. (ինքնաբերաբար) Ո՛ր. — պարոն Սարտի-
րոս, ինչո՞ւ կասիս, մեր պապաները որ
բանը երկար բարակ մտիք արիլ ին, ո՞ր
բանին վերջը բարին կամ չարը ճօկիլ ին
որ . . . նոքա միմիայն սընտուկներս մէկ
քանի քաղիք աւելի կոխինք ու զաւակ-
ներուս թողցունունք տէի, գիշերն ալ
հանգիստ քուն չունէին, ցորեկն ալ
բերնի համով կերակուր. էհ, տէէլիմ
ատ գէշ բան չէ, որ կաշխատին եղիլէ
հարստութիւն դիզելու զաւակներուն
համար, աղէկ ամա, երթայ ու այն
զաւակը հօրմէն մնացած փարան մէն
բերելու կրնայ, հա՛պա եղլէ առջի օրը
մէկ հազարին ծայրին համնի, երկու-
սում օրը մէկալ հազարին, երեքում
օրը տահա քիչ մը. էն եաքը սընտու-



կի տակի թողին . . . հրամմէ նայիմ,
անկից ետքը ի՞նչ թող անէ. խեղճ
հայրեր, խեղճ տղայք. — մէկն ալ իշտէ
ես եմ, իմ վրաս ասիմ. Աստուած
լուսաւորէ հոգուն, — տղայ ատենս
տօղրուսու (ճշմարիտ) կարդալու խիստ
պէթէր հավէս ունէի, քերական,
պզտի սաղմոս էփիէի եղիլ էր, ամմա
նէ՛ փայտայ, համան զարկից կուլ-
խուս քաշից վարժատունէն առաւ.
„Կօզում արթըրս կարդացածդ, ասաց,
քեզի կարդմունքէն աւելի առու-
տուր պէտք է, վարդապետ ըլլալու
չես ալ“. ան իսէ միտք չի՛ն անիլ որ
վարդապետէն աւելի վաճառականին
պէտք է գրել ու կարդալը, հէմ չէ
սալթը հայնակը, հապա էկէր մին-
քին է նէ՛ ամէն լեզուն ալ, ամա
քիմէ տէրսին. ան ատենուան զան-

ցան ալ անպէս է եղել է, խելքերը սատէ փարային հասցուցել են. ամա չիմնոր, ծեր ալ ըլլամ նէ՝ խելքս խիստ թեմիզ հասիլ է, որ փարան պէտք է ամա, ուսումը փարայէն ալ աւելի պէտք է:

Մար. (Գլուխը խոնարհելով) Հա՛ հա՛ Պետրոս աղա. ատ խօսքիդ ես շատ աւելի հաւնեցայ. նայէ՛ ուսումը ինչքան արժէք ունի ու ինչքան թեթեւութիւն. այսօրուան օրս չէ թէ միայն վաճառականի, այլ ա՛ռ հասարակ ամէն աշխարհիս վերայ պատահեալ դէպքերուն ուսումը պէտք է. օրինակի համար ....

Պետ. (Նստած տեղէն շարժուելով) Խօրդ. պարոն Մարտիրոս, ասիս նէ խնդրեմ, ի՞նչ կըսուի իսա նոր զինուորական կարգադրութեան մասին.— կասին որ Ռուսին թագաւորը ամէն ազգէն



սալտաթ պիտի առնէ.— Ճշմարիտ չիգտիմ, այդ բանը ինչ աստիճանի ճշմարտութիւն ունի մէջը, գէրէ կիտե՞ս, այս քանի հարիւր տարիներ եղաւ, որ մենք Հայաստանէն ելլած՝ մէկ մասերս աշխարհիս մէկ կողմը, մէկ մասերս ալ միւս կողմը ձգուած ըլլալով, մեզի ամէն թագաւորութիւն մէկ քեօշայ մը տուիլ էր, որ մենք մեր խեղճութիւնը հոգալով, մեր զաւակները խնամենք ու պահպանենք (գլուխը շարժելով), հապա չինտըլս կասին որ, Ռուսի թագաւորը ամէն ազգի իրեն հպատակ 21 տարեկան տղայը սալտաթ պիտի առնէ:

Մար. (Ժպտելով) Ամէն ազգինը կասիս ամա, միտքդ խիստ թեմիզ չհասկացայ Պետրոս աղա, իսա (զարմնելով) ամմէն խօսքիդ մէջը Հայն ալ կա՞յ չէ նէ չէ:

Պ. Չէ՞ տահա ինչ դուն ալ.—Պարոն Մարտիրոս, դու տեսած չե՞ս մեր Նախիջեւանինը ասիմ, Խրիմինը ասիմ, Գրիգորուպօլիսինը ասիմ Ռուսին թագաւորին մեզի տուած փրուիլէ-լէկը. խոշոր, խոշոր ոսկի եալտըզ տպված կիրերով, պալապան մէհիւ-րով, ծայրէն ալ մեծ փիւսքիւլ կա-խուած. ասոնք ամէնն ալ ամէն քա-ղաք իրենց Ռաթուշին մէջը պահուած են, պախաթնիս քառօփքայի մէջ: Դու հի՞չ տեսած չի՞ս գայիր աս փուի-վէլէկը. թիւֆ, թիւֆ. հա՛ծէ տեսնելու բաներ են. (Եռանդով) թագաւո-րին իրեն ձեռքն ալ տակը գրուած, շատ տեսօք ու տեսնելու բան է:

Մ. (Երեսը սեղանին մօտեցնելով և ապշութեամբ Պետրոս աղային վրան նայելով) Ջա՛նս Պետ-րոս աղա, աստ խնդրեմ, իրաւ ես ալ



թէև լսիլ իլ եմ, որ Հայերը Ռուսին տէրութենէն փուիվէլէկ ունին տէ-ամա, օտնաքօ մինչև այսօր ամենևին կրցած չիմ իմանալ թէ մէջի տուած իրաւունքները ինչ բանի վերաբե-րեալ է:

Պ. Ըխտակս ասիմ. Պ. Մարտիրոս, անոր մէջի գրուած բաները ամէնն ալ շատ աղէկ ու ուինտ բաներ են ամա, օխա-տարքինէ փայտայ:

Մ. (Զարմացմամբ) Ինչո՞ւ, Պետրոս աղայ, նէ փայտա՛ն ո՞րն է:

Պ. (Տխուր կերպով) Ըսիմ ասիմ, ճանըմ Մարտիրոս. Ռուսի զօրաւոր թագա-ւորը մեր Հայ ազգի խեղճութիւնը տեսնելով, արի կասէ, իմ քրիստոնեայ հայ եղբարց մէկ բարութիւն մը անիմ, որպէս գի անոնց բանտ և մահ ապա-նացող թշնամիները անգադար նեղու-

թեան մէջ տեսնելով ծաղր չանեն, ու
նոքա ալ օր ատէն իրենց բարեկամը և
բարերարը ճանչնալով՝ Աստուծոյ շնոր-
հակալ ըլլան և աղօթք անեն, որ
միշտ թշնամեաց յաղթող գտնուի:

Մ. Պետրոս աղա, հրամանքեդ մէկ բան
մըն ալ հարցունիմ. սաս խնդրեմ,
այդ բարերարութիւնը, որն որ Ռու-
սաց կայսրը մեր ազգին արիլ է նէ,—
շատ բարի. մեր ազգն ալ նայինք մինչև
այսօր ինչպէս որ հարկն է ճանչցե՞լ
են թէ ոչ, եթէ ճանչցել են, կատա-
րեր են իրենց պարտքը կամ կկատարե՞ն
թէ ոչ:

Գ. (Աչքերը խոնարհեցնելով) Ինչպէս, ինչպէս...
անպատճառ. ահա 68 տարեկան եմ
արթըլս, դարձեալ ամէն թագաւորի
տօնախմբութեան օր եկեղեցի կնա-
ցիլ եմ ու միշտ ծունկի գալով նորա



թշնամեաց յաղթութեան և երկար
կենաց համար աղօթք արիլ եմ, ան-
կեց ալ ճոկ, միշտ զաւակներուս ան-
կաճին մէջը լեցուցեր եմ, որ մենք
Հայերս միշտ և հանապազ պարտա-
կան եմք Աստուծմէ յաջողութիւն և
երկար կեանք խնդրուիլ (աղօթելով) մե՛ր
թագաւորին համար:

Մ. Պետրոս աղա, թողութիւն արա՛,
մէկ հարցմունք մըն ալ ունիմ հրաման-
քեդ. զաւակներդ վարպետ կերթա՞ն
թէ ոչ:

Գ. Հապա, հապա, և շատ աղէկ յա-
ռաջադիմութիւն կցուցանեն, վար-
ժապետին պատմունքէն:

Մ. Ացանկալի իմանալ, արդեօք Հայոց
պատմութիւն ալ կսորվի՞ն թէ ոչ:

Գ. Հէլպէթ կսորվին. ինչպէս կարելի է
մարդ մը իրեն ազգին սկիզբը կամ

պատմութիւնը չսովրի չգիտնայ:

Մկ. Ոչ. իմ խօսքս աստր վրայօք չէ. միմիայն կուզէի իմանալ, արդեօք տղայք գիտե՞ն ինչպէս թագաւորի համար աղօթք արածները թէ ո՛չ. վասն զի, Նայէ Պետրոս աղա, քիչ մը առաջ ասիր որ,—ես տղոցս անկածը լեցուցեր եմ, որ (ցուցնելով) մեր թագաւորի համար միշտ և համապազ աղօթք անին,—մեծ տու թեմ, կասիս որ տղայքը Հայոց պատմութիւն ալ կսովրին տէր,—ուրեմն գիտե՞ն արդեօք անմեղ տղայքը որո՛ւն աւելի պարտական են, և ո՛վ ըլլալը մեր թագաւորը՝ որուն համար որ աղօթք կանենք և պիտի անինք. արդեօք այն Հայոց պատմութեան մէջի թագաւորները, որոնք որ իրենց անմիաբանութեամբ թագաւորութիւնն ալ



տէրութիւն ալ կորուսին ու զմեզ խեղճութեան մէ՞ջ ձգեցին,—թէ այն թագաւորը, որն որ զմեզ խեղճութեան մէջ տեսնելով, ամենուս իրեն թեւին տակը ժողուեց ու պահպանեց մինչև այսօր, այնպէս՝ ինչպէս հաւն իւր ձագերը:

ՏԵՍԻԼ Գ.

Պօղ. (Պօղոս աղան ներս կմտնէ ու [illegible] ծռելով կբարևէ) Բարև ձեզ, Պետրոս աղա. խնդրեմ թողութիւն շնորհէք:

Պետ. (Ոտքի կելնէ) Խնդրեմ այդպէս մի ասէք. ես շատ ուրախ եմ, բարի եկաք հազա՛ր բարի—խնդրեմ ([illegible] աթոռը ցուցնելով), փաժ ա՛լթ անատէք:

Գ. (Ու. Մարտիրոս) Բարև ձեզ, պարոն Մարտիրոս. այսօր զձեզ շատ կցանկայի տեսնալ, վասն զի աւելի հարկաւոր գործ ունէի (կնոջ) Թէև ուղղակի ձեր տունը գնացի, սակայն ինձ ասին, որ աղա Գէորգս խլատուզեանին տունը կարելի կըլլայ զձեզ գտնալ. այդ խելուս պէս, առանց այդին անդին նայելու (ձեռքին [illegible] Գէորգս աղա) խնդրեմ ներեցէք համարձակութեանս, չիտակ ձեզի եկայ ու ներս մտայ, մի՛ գուցէ իմ այս տեսակ անվայել համարձակութիւնս ձեր, ո՞վ գիտէ, անդին խորհուրդը միջահատեալ թողու:

Գ. ([illegible] Գաբրիէլին [illegible]) Մի՛ ասէք, մի՛ ասէք այդպէս, աւելի սիրտս կցաւի. Նախնօթիւ, ես ուրախ եմ, որ մեր այս խորհուրդի ժա-



մանակ, ձեզ պէս ուսեալ մարդ մը պատահեցաւ, կարելի է դուք ալ....

Գ. Գիտէք, կասէ Յուսափ առածը. „ներդվանկը կօլթ խուժէ թամթաւինա, բայց ինչ.....

Ս. պ. Գաբրիէլ, ինչո՞ւ այդ առածը այժմս ձեր վերայ կբերէք. միթէ ([illegible]) Գէորգս աղայէն դուք չէ՞ք ճանչնար ով ըլլալը, կամ ինչ աստիճանի ուսեալ մարդ պատուելը. ո՛չ, ո՛չ այդպէս մի՛ ասէք. շատ լաւ արի՛ք եկածներդ, ի հարկէ աւոր պատճառն ալ պէտք է ըլլայ, որ...

Գ. Անշուշտ. և եթէ ասեմ, կարելի է Գէորգս աղան ալ կուրախանայ:

Գ. Ըսէք խնդրեմ, ասէք պ. Գաբրիէլ. շատ ուրախ կըլլամ եթէ գիտնամ, որ զձեզ ալ կուրախացնէ իմ տունը այդ համարձակութեամբ գալերդ,

տամէ հիչ բերանս չիմ առնիլ ամա,
մէկ մախաուիչ մըն ալ պատրաստ եմ...

Մ․- (Առանձին դիմելով) Ըսէք խնդրեմ, ես Պետրոս աղային հետ կմիաբանիմ:

Գ․- Արդարև պ. Մարտիրոս միաբանելու չափ ուրախութեան լուր մը ըստա-ցայ, բայց չգիտեմ, արդեօք կրնա՞մ գտնալ Պետրոս աղային խոստմանը մէջ....

Պ․- (Առանձինընեամբ) Նո՛յ Պօղոս խոստումս կկատարիմ, միայն մի՛ ուշացնէք ասէք․ (Կողմն յետուն ցուցնելով) իշտէ այս մար-դիկն ալ թող վկայ ըլլան, ասէք ինչ լուր....

Գ․- (Գրպանէն նամակ մը հանելով) Որովհետև կտեսնամ ձեր մտքի և սրտի հաստա-տութիւնը, այժմ իրաւունք կուտամ ինձ ամեն համարձակութեամբ բա-նալ իմ գաղտնիքը, (առ Պետրոս աղա)



Պետրոս աղայ, ձեր առջև, գուցէ դուք ալ ուրախ եղածներէդ ի զատ, կընդունիք իմ ձեզ անելու խնդիրը․ վասն զի պարոն Մարտիրոսին ինձ աւելի այսօր հարկաւոր եղածն միայն ձեզ համար էր, (նամակը բանալով) գիտ-նալով որ նա ձեզ հետ բարեկամ է, կարելի է նորա միջնորդութեամբ իմ խնդիրը ձեզ ընդունելի ըլլար, սա-կայն շատ ուրախ իմ, որ դարձեալ նորա պատճառաւ անձամբ ձեզ հետ բաղդ ունեցայ տեսնուիլ և մէկ մէկու սիրտերս պարզել, կարծեմ, այսօր-ուանէ բարեկամ ալ կոչուիլ:

Պ․- Անպատճառ. պ. Գաբրիէլ հաւա-տացէք իմ ուրախութեանը չափ չկայ, որ բաղդ ունեցայ ձեզ նման ազնիւ մարդու մը հետ բարեկամ կոչ-ուիլ․ որովհետև ինքս ծեր եղէլեքի մարդ

աւ ըլլամ նէ, վսեօ թաքի, հիմա-
կուան մարդոց ամէն ինչ շարժմուն-
քին կհաւնիմ և սիրով պատրաստ
եմ անոնց բոլոր խնդիրները կատա-
րելու:

Գուր. (Անուշէն ծրարը առնելով կ'ծոէ) Շատ շնոր-
հակալ եմ Պետրոս աղա. ուստի
խնդրեմ լսեցէք իմ ստացած լուրը,
կարծեմ իրաւունք կուտաք ուրախա-
նալու, վասն զի դուք այս տեսակ
գործերու գուցէ ենթարկուած ըլլաք.
(կակաղ ձայնով կարդալ կսկսի, իսկ Պետրոս աղան և Մար-
տիրոս ուշադրութեամբ ականջ կ'դնեն):

„Անգին եղբայր իմ Գաբրիէլ. ահա չորս տա-
րուայ բաժանումներէս վերջը, Աստուծոյ
ողորմութեամբ, արժանացանք քիչ ժամա-
նակուան ալ ըլլայ, իրարու հետ տեսութիւն
ունենալու. վասն զի հրամանաւ պատերազմական
ատեկանութեան նոր տնօրէնութիւն եղաւ,
որ ես ամբողջ գնդով խմբով գնամ Խրիմու-
նահանգ ի քաղաքն Սեվաստոպոլ, ուր Ալայըը



ինքը պէտք է մօ'թու անէ բոլոր զօրքերը.
որոյ վասն խնդրեմ քեզ, եղբայր իմ, այդ
քաղաքին մէջ մէկ օթեւան մը, եթէ ծանրու-
թիւն չհամարիս, ինձ համար մէկ գիշերուայ
պատրաստես, որովհետև տակէց այսօր թէ
վաղը անցնելու եմ բոլոր իմ գնդով:

Եղբայր քո ՄԻՔԱՅԷԼ ԲԱԲԻԼԵԱՆ“

(Առ Պետրոս աղա) ահա Պետրոս աղա,
իմ ուրախութեան լուրը, կարծեմ
դուք ալ կվկայէք, որ ոչ սակաւ ու-
րախութիւն կրնայ պատճառել որ և
իցէ մասնաւոր սէր ունեցող եղբօր մը
սրտը, առաւել յիշելով, որ ամբողջ
չորս տարի իրարու հետ տեսնուած
չըլլան ու յանկարծ չորս տարիէն
վերջը ողջ և առողջ ամբողջ գնդի
գնդապետ եղած տեսնուի, և....

Մն. Մեծ ուրախութիւն, մեծ աւետիս.
(առ Գաբրիէլ) պ. Գաբրիէլ ճշմարիտ
կասեմ, որ թէ և ես քո միայն բա-

ընկած եմ, այնու ամենայնիւ, առւտ չառեմ, ձեր չափ չուրախամ նէ ալ, ձեզմէ շատ պակաս ալ չէ ուրախութիւնս, վասն զի . . .

Գ/ (Գաւազանը յայնում) պ. Մարտիրոս, մի առեր. երկինք թող վկայ ըլլայ, ձեռքս ոտքս ուրախութենէս դող առաւ, երբ լսեցի թէ չորս տարուան անտես եղբօրմէ պ. Գաբրիէլը այդ տեսակ աւետաբեր գիր առացել է, բայց ինչ առոինձանի ուրախութիւն, երբոր պ. Գաբրիէլը արժանի ըլլայ չորս տարուան մէջ իւր եղբայրը գնդակէտ եղած տեսնել (կուլայ) հաւատացէք, ես իմ կողմանէ մէկ առաջարկութիւն մը կանէի պ. Գաբրիէլին թէ որ, (առ Գաբրիէլ) պ. Գաբրիէլ, եթէ գիտնայի ընդունելի ըլլալը իմ անելու ձեզ առաջարկութիւնս . . . . .



Գէ. (ծունրը) Գլխիս վերայ կընդունիմ Գէորգ աղա, մանաւանդ ձեզ նման պատուաւոր անձի առաջարկութիւնը ո՞վ կրնայ մերժել, առաւել ես, որ այս տեսակ սէր կվայելեմ դեռ առաջի տեսութիւն անելուս:

(Գէորգ աղան Մարտիրոսին վերայ նայելով՝ նշանը նորանն կատարած կուզէ.)

Մ. Գէորգ աղա. ամենեւին մի քաշուիք. որքան ալ ծանր ըլլայ ձեր պարոն Գաբրիէլի անելու առաջարկութիւնը, ես հաւատացնեմ ձեզ, որ այս բարեհոգի անձը սիրով զայն կկատարէ, խնդրեմ առանց բան մը ծածկելու համարձակ առէք:

Գ. Երդումն այդպէս է, Գէորգ աղա. վայրկեան մի կորսնցնէք, այլ համարձակ առէք իբրև ձեր որդուն, պատրաստ եմ ամենայն սիրով զայն կատարելու:

Գ. (Ամաչելով, յետոյ ժպտելէն դնելով) Որովհետեւ, մէյմը բերնէս հանած գտնուեցայ, և (առ Մարտիրոս) դուք ալ, շնորհակալ եմ, բարի յիշատակ ըլլաք ձեր ծնողաց, միակերպ վերայ տուիք և հաւատացուցիք, որ պ. Գաբրիէլի սրտին ծանր չի գար իմ ասելիքս, անոր համար (առ Գաբրիէլ) պ. Գաբրիէլ, ասելիք խնդիրս այս էր, որ կուզէի իմանալ. ձեր եղբայրը, որմէն որ նամակ առացել էք, թէ այսօր կամ վաղը գալու տէրի, անձամբ այս քաղաքը ո՞ւր տեղ պիտի իջնայ, արդեօք մէկ հանգիստ տուն պատրաստեր էք նորա համար. Ճշմարիտ ես իմ տունս այդ կառոյին կզոհէի, թէոր գիտնայի հաւնելներդ և ընդունելի ըլլալը, թէև մէկ երևելի պալատ մը չըլլայ ալ իմ տունս, ամմա ես շատ ուրախ կըլլայի թէոր ձեր եղբայրը իմ տունս.....



Պ. (Շնորհակալութեամբ Պետրոս աղային յետեւէն բռնելով) Շատ և շատ շնորհակալ եմ, ազնուափառ Պետրոս աղա:

Պ. (Ախորժէն կծուցիւղանով թաղչէյալ ծոցէն) Չէ պ. Գաբրիէլ. ո՞վ գիտնայ, կարելի է մէկ բան մը ալ կայ, կարելի է մտքերէդ անցունէք թէ իմ ըմմէյսթիվաս, այսինքն պալա-չաղաս նորան անհանգիստ անէ, ես անոնց ամենուն ալ (երեւալով) էն ծայրի տունը պիտի խրկիմ, որ գիշերը չըլլայ թէ ծան—ման հանեն ու ձանձրոյթ մարդուն ռահաթսըզ անեն.....

Պ. (Առ Մարտիրոս) պ. Մարտիրոս. ասէք խնդրեմ, որ Պետրոս աղան այդ տեսակ անհանգստութիւն չըլլա՞յ թէ տայ իր ընտանեաց, արդէն բաւական է որ, փոխանակ իմ խնդրելուս, ինքը սիրով առաջարկեց իր տունը, որոյ

համար իրմէն շատ շնորհակալ եմ (Պետրոս աղան քթախոտը կ'առնէ) դեռ նո՛ միտքը դրել է բոլոր իր աստուածապաշտ ընտանեաց տեղափոխութիւն անելով անհանգիստ անէ. քա՛ւ լիցի. (առ Պետրոս) Պետրո՛ս աղա, թէև ես երդում ասած բանդ մինչև ցայժմ բերնէս երբէք չեմ հանած, բայց այժմ պարտաւորուած կերդնում ձեզ, եկեղեցին վկայ ըլլայ. սիրտս աւելի կցաւի, եթէ իմանամ ընտանիքիդ տեղափոխութիւն արածըդ, (կուլայ) հաւատացէք որ պատերազմական մարդը շատ հանգստութիւն չունէր, միմիայն ինձ համար բաւական է, որ ես այս տեսակ ընդունելութիւն գտնալէս վերջը, իմ անելու խնդիրը (առ Պետրոս) դուք արիք. առաւել ուրախ եմ, որ պ. Մարտիրոսին ծանրութիւն չպատ-



ճառելով եղաւ այս գործը, վասն զի նամակն ստանալուս պէս սկսայ մտակերպ, ինչպէս ասիլ եինէ, պ. Մարտիրոսին մնատել, որ նորա միջնորդութեամբ կարենամ (առ Պետրոս) ձեր, Պետրոս աղա, տունը խնդրել գնեա՛ մէկ գիշերուայ, ուստի այժմ կմնայ ամենայն շնորհակալութեամբ այս գործը ի կատար ածել:

Պէտ. Պարոն Գաբրիէլ, դուք ամենևին հանգիստ եղէք. ես հիմա կհրամայեմ ծառային, որ այս քօմնաթն ալ սփալնին ալ թէմուզցնէ պատրաստէ, և...

Գաբ. խնդրեմ Պետրոս աղա, ամենևին առանձին պատրաստութիւններ մի՛ անէք, բաւական է, ես ձեզ ասի, որ պատերազմական մարդը շատ հանգըստութիւն չունէր, բայց իմ աւելքս այժմ այն են, որ պ. Մարտիրոսը ինձմէ

չխնայէր իւր ծառան մէկ քանի ժա-
մուայ (առ Մարքէրա) պ. Մարտիրոս,
կարելի չէ՞ արդեօք ձեր ծառային մէկը
ինձ տայիք մէկ քանի ժամուայ ։

Ա. Ամենայն սիրով, ամենայն սիրով, միայն
ասէք խնդրեմ, ի՞նչ անելու էք ծա-
ռային ։

Պ. պ. Գաբրիէլ, դուք ալ ամենեւին մի՛
աշխատէք, ես ամէն բանը իրեն կար-
գով կպատրաստեմ. ծառան ալ, ա-
ղախինն ալ կթողում ձեր եղբօր տան
մէջ պէտքերը կատարելու ։

Գ. Առաւել շնորհակալ եմ Պետրոս աղա,
ձեր այդ աստիճանի ցուցած սիրոյն,
սակայն իմ պ. Մարտիրոսէն ծառայ
ուզենալս ուրիշ նպատակ ունի . . .

Ա. Պատրաստ եմ. մէկը չէ երկուսն ալ
տամ, եթէ գիտնամ գործով մը հեռու
տեղ իրկէններդ կարելի է ձիուս մէկն



ալ առնու, վասն զի ոչ ինչ գործ
չունին, կրնայ ձիով երթալ ։

Գ. Շատ լաւ բան կըլլար պ. Մարտի-
րոս, և շատ շնորհակալ կըլլայի. թող
քիչ լղար ըլլայ, ոչ ինչ. կարծեմ կարող
կըլլայ գոնեա կէս ժամ առաջ մեզ
իմաց տալ զօրաց գալը և ինչ հեռա-
ւորութեամբ տեղ մնալները ։

Գ. Ինչո՞ւ ճանըմ պ. Մարտիրոսին
կծանրացնէք. ես հիմա հրամայեմ
իմ ծառայիս, որ ձին հեծնայ ու
առջև ելլէ նայի և մեզ իմացընէ.
հեռո՞ւ են դեռ ևս թէ ոչ ։

Ա. Պետրոս աղա. ինչո՞ւ ամէն ծանրու-
թիւն ձեր վրայ կառնուք. միթէ
քո մէկ այդ . . . . .

Գ. Ո՛չ ոչ, Պետրոս աղա. ես ձեզմէ
շատ շնորհակալ եմ. գիտեմ որ պ.
Մարտիրոսն ալ իմ բաւական ժա-

մանակուայ բարեկամն է, ուստի այս-
չափն ալ կխնդրեմ․ որ խնքը կա-
տարէ։
Պ. (Յօժարութեամբ) Էհ, թէ որ այդպէս
ասէք, ես յօժար եմ․ միայն իմ
միտքս մէկ բան մը ընկաւ, կարծեմ
ծուռ չըլլար․ այդ ձիաւորին դուք
հիմա խրկելո՞ւ էք թէ ո՛չ։
Գ. Հարկաւ հիմա պէտք կըլլայ խրկել,
որ ճանապարհին անցաւորներէն հարց-
նէ՝ արդեօք տեսած չէ՞ն։
Մ. Ես ալ այնպէս կարծեմ, որ հիմա
երթայ․ ո՛վ գիտէ, գիրին մէջը գրիլ է
„այսօր կամ վաղը“ գուցէ այսօր գայ․
անպատճառ պէտք է հիմա խրկել։
Պ. Շատ աղէկ․ այն ձիաւորը պիտի
երթայ ու մեզ միայն իմաց բերէ գալը
կամ չգալը․ կարծեմ այդ բաւական չէ։
Մ. Ինչո՞ւ, Պետրոս աղա։



Պ. Ըսիմ ալ․ ի՞նչ փայտայ մեզի իմաց
բերածէն, քանի որ պ. Գաբրիէլի
եղբայրը չգիտէ քաղաքին մէջը որուն
տունը իջնալը․ իմ թաչմինովս ան-
պատճառ պէտք է ձիաւորին ձեռքը
մէկ զափիաքայ մը տրուի, որ նա եր-
թայ ու մէկ մօտիկ թուակթիս մը
սպասէ, և այնտեղ եկածներուն պէս
յանձնէ նոցա ձեռքը, որ նոքա ալ
քաղաք մտածներուն պէս, այն զա-
փիաքային գօրութինով տէփոլթա-
թին հետ այս տեղ գան։
Մ. (Աթոռէն կելնէ [illegible]) Շատ աղէկ ու
շատ շիտակ է Պետրոս աղա ձեր ասածը
(առ Գաբրիէլ) պ. Գաբրիէլ, անպատ-
ճառ պէտք է Պետրոս աղային ասածին
պէս մէկ տոմսակ մը գրել ու ձիաւո-
րին ձեռքը տալ։
Գ. (Աթոռէն կելնէ) Շատ շնորհակալ եմ

Պետրոս աղա, որ միտքս ձգեցիք, ուստի ( Գրպանէն թուղթի կտորուանք հանելով ) անպատճառ գրեմ:

Պ. ( Մինաս ուննեակը շտապելով կերթայ ու թուղթ գրիչ թանաք կբերէ ) հրամեցէք պարոն Գաբրիէլ. ( սեղանին վերայ դնելով. իսկ Գաբրիէլը նստի գրել ) :

Ս. Ինչպէս է նէ ես երթամ ու ասեմ ծառային, որ ձին առնու ու այս տեղ գայ:

Գ. ( Գրելով ) Ինչո՞ւ պ. Մարտիրոս, հարկ չկայ. վասն զի ես այժմ կգրեմ ու միատեղ կերթանք ձեզ:

Մ. ( Կարդալէ ) ուրեմն շատ լաւ:

( Այդ միջոցին Պետրոս աղան Մարտիրոսէն յետ-ւէն բռնելով նորէն ունեակէ մէջը հանդարտ տանել ու լուռ կերպով երթալու հետ խօսելու յետոյ անել )

Գ. ( Գրելով ) Պետրոս աղա, խնդրեմ ասէք ձեր հայրանունը և մականունը, կարծեմ աւելի բան հարկ չկայ գրե-



լու, վասն զի տէփոթաթը կգտնայ տունը, եթէ հարցնէ եղբօրմէս տոմսակի մէջի մականունը:

Մ. Ի հարկէ կգտնայ, Պետրոս աղային տունը ամէնն ալ կճանչնան:

Պ. ( Սեղանին մօտենալով և ցուցական մատով գրին ցուցնելով ) Գրեցէք. Պետրոս Մատթէոսեան Խլաուզեան, սոփաթվեննի տունը:

Պ. ( Կգրէ ու նոյն բարձր կարդայ ) „Սիրելի և թանկագին եղբայր իմ Միքայէլ. փութամ սոխաւ ծանուցանել քեզ, որ ամսոյս 10-ին ստացայ աւետաբեր գիրդ, շատ ուրախացայ, և իբրև հարազատ եղբայր անհրաժեշտ պարտք համարեցի անմիջապէս քեզ համար մէկ գիշերուայ օթևան մը գտնալ այս քաղաքիս մէջ ազնուասիրտ Պետրոս աղա Խլաուզեանի տունը. անկեղծ ասեմ, որ

շատ և շատ գովելի ծերունի է, վասն
զի ինքը իւր կողմանէ սիրով ցոյց
տուաւ, մանաւանդ զքեզ, հիւր-
ընկալնոյ սէրը: Եղբայր քո Գաբրի-
էլ Բաբելեան: (Թուղթը ձեռքին մէջ դնելով
վրան կգրէ ու կկարդայ) Եգօ վիսօքօպլագօ-
ռօտիու Միխայիլու Իվանովիչու Կօս-
պօտինու Բաբելեան“ (տեղէն ելնելով
[illegible]) Ուրեմն շատ շնորհա-
կալ եմ Պետրոս աղա, տը այժմ
մնաք բարև. (առ Մարտիրոս) պ. Մար-
տիրոս գնանք ու շուտով ուղարկենք
այս տոմսակը, մի՛ գուցէ ուշանանք
(կերթայ):

Մ. (Նստելով) Ուրեմն մնաք բարև Պետ-
րոս աղա (կերթայ).

Պ. (Խոնարհելով) Երթայք բարև. Աստուած
յաջողէ հեռաւորներս ողջ և առողջ
տեսնելու. (Միայնակ մնացած [illegible]



[illegible])
եկէք հիմա խօսինք ու դատողու-
թիւն ընենք. արդեօք ուրախու-
թիւն չէ՞ եղբօր մը համար կամ թէ
հօր ու մօր համար երեք կամ չորս
տարվան միջոցին իրենց եղբայրը կամ
որդին յանկարծ փոլքօվնիք տեսնալը.
երանի քեզ պ. Գաբրիէլ, որ այդ-
քան երջանիկ ես, որ էն առաջուան
պտուղը նոր սերման դէմ քաղեցիր.
(կուլայ) մե՛նք իսկ, ամէնքս լեզուներս
պատռած ծակէ ծակ կփախչինք,
գլուխներս պատէ պատ, քարէ քար
կզարնինք ([illegible]) վա՜յ, աս ինչ պա-
տիժ Աստուծմէ մեր գլխուն, ասելով.
մե՛ր զաւակները սալդաթ պիտի ըլլան.
լացողը մի՛, ողբացողը մի՛, տա՜ ալ չե-
ղաւ. փոխվելէկին պօչէն պռնող մի՛,
թագաւորին ոտփոթած խոկողը մի՛,

ախըբար ես ինչ գիտենամ. ես որ մէկը ասիմ. ես ալ հողեղէն մարդ եմ. ամենուն լացը խըյամէթը տեսայնէ, տօղրուսու իմ սիրտս ալ փախ ինկաւ, սուս չասիմ. լաց ու կոծում չարի ամա, նօ՛ խոա փոխվելէկլին վրայօք մէկ քանի մարդու հարցունիմ ասի. ա՛նիսէ նայէ աշխարհիս վրայ ինչե՛ր կայ եղիլ է. ամա մեր խեղճ Հայերը միտքերը դրիլ ին, որ զաւակները սաւտալթ եղան, վսեօ-ռավնօ մեռան. ես ալ ատոնք լսելով (աչքերը սրբելով) չիտակս ասիմ, սիրտս շարժեցաւ: Ըղբար ես ինչ գիտենամ, զաւակ ատածը պա՛ն պաշխայ բան է, հէչ մէկ բանի չփոխուիր. (այս միջոցին պատի ժամը 3 կշռէ) սահաթը 3 եղաւ. ես խէ կեցիլ եմ երկար ու պարապ դատողութիւն կանիմ, հապա փաթըռ քիւ-



թիւռ խապէր գա՞յ. կուզա՛ն տէի, ի՞նչ կանիմ. ամօթով մնացի կնաց տայ. (շփոթելով): Երթամ ծառային ներս խրկեմ, որ քօմնաթները պատրաստէ, ջուրը և ամէն բան իրեն եօլովը (երթալով) որ . . .

## ՏԵՍԻԼ Դ.

Կ. (Գլուխը ներսէ դրան մէջ) Աղա. փոխցայէն մարդ եկիլ է, հրամանքիդ փոխցմէյսթուը ձայն կուտայ, կասէ:

Պ. Հա՛, շատ աղէկ. գնա՛ ասա մարդուն, որ ես այս թախէիս կերթամ փոխց:

Կ. (Երթալու վրայ) Շատ բարի աղա:

Պ. (Երթալէն կանչելով) Հածէ Կիրակոս:

Կ. (Կեցնելով դրան մէջ) Հրամմէ աղա:

Պ. Խոա մարդուն ասածս ասա՛, ու հէ-

մէն շուտով թող լաթն ու աւելը առ արի. սա երկու քօթնաթը թէ-մուզցուր հաղիր արա՛, սփաընիին մէջը ջուրն ու ամէն բան անոր կէօրէ իրեն սրայով հազիր արա՛, զէրէ գալու մի-սաֆիր ունինք. նայէ չմոռանաս, շու-տով կատարէս:

Կ. Շա՛տ բարի, շա՛տ բարի շէնտը: (կերթայ):

Գ. (Կուլայ) Խո՛րդ կիտես ճանըմ ես այդպէս մոռցուկոտ չէի ու. ինչո՞ւ միտքէս ելաւ, որ անցած օր որդիս ալ ասիլ էր սէմէյնիյ սփիսօքը կու-զին տէյին ու, ինչո՞ւ համար մոռցի-լիմ, որ, հէմ նայելու ըլլաս նէ, գլուած հազիր է ու. պարիմ առնեմ տանիմ. ո՞վ գիտնայ, թեամ նէ պէլքի ես ալ արժանի կըլլամ իմ որդուս այսպէս տեսնել, ինչպէս որ պ. Գաբ-րիէլը կապասէ տեսնելու իրեն Մի-



քայէլ եղօրը, թէ որ Աստուած կեանք պարգևէ նէ՝ իշալլահ կտեսնիմ. իշտէ, հիմա 68 տարու եմ, չորս տարի ալ կեանք ունենամ նէ՝ մէկ որդուս փոլքօֆնիք չըլլայ ալ նէ, գո-նէ փառուչչիք կամ մայօռ կտեսնիմ. կինտիմ, կարելի է ասող ըլլայ „Չէ, պատուական ծերուկ չէ, ամէնը փոլ-քօֆնիք կամ փառուչչիք կամ մայօռ չեն ըլլար“ տէյին նէ, անոր ալ տալու պատասխանս այս է.—պատուարժան հայրեր և մայրեր, յոյսերդ հաստատ դրէք, որ ամէնն ալ փոլքօֆնիք չէ, կրնան կեներալ ալ ըլլալ, թէ որ սէ-րերդ չկտրէք ձեր զաւակաց ուսում տալէն, ու նոքա ալ սիրով և հաւա-տարմութեամբ ծառայելու ըլլան մեր թագաւորին, որպէս հաստատ պարտք ամէն մէկուս վերայ, իբրև որդիք

իրենց ծնողաց և կամ որդիք իրենց հայրենեաց սիրով վառուած։

## ՏԵՍԻԼ Ե.

Ա. (Մէկ ձեռքը աւել բռնած, միւսը լամբ մը ներս կմտնէ ու կոկիկ սենեակին մէյմը մէկ կողմը, մէյմը միւս կողմը աւլելով փոշիները մաքրել) Թօխիֆ մոռ– ցայ....

Գ. (Արտասուաց ու Աբրահամին գալը լսելով իրեն չիմացած) Ջահէլ Աբրահամ եկա՞ր, հա՛ հա՛ ափփէ– րիմ. նայէ ի՛նչխատար մինքին է նէ թէմիզ արա. ես կերթամ ու շինար կուգամ (մեկնի)։

Ա. (Մտիկելով) աղէկ աղէկ աղաս. ես աս սահաթիս ամէն բան սրայի կձգեմ, ամէն բան հայլի պէս կանիմ. (կողմն) ճանըմ ա՛ս իմ աղաս ապէմնակ ա– տէլթներ չունէր ու, (շարունակ) ա՛ս



ի՛նչ պիտի ըլլայ աՃապայ. իմ Գէտ– րոս աղաս, իշտէ՛, ա՛յս տարի օգոս– տոսի 9-ին Թամամ տասը իրեք տարի կըլլայ քովը եղած ս, ամա հի՛չ մէկ օ՛ր մը աս չէշիթ հաղի– րութին արած չէր. մէ՛կ օր մը ե– ղած չէր, որ նորա տունը երկու հա– գի թոփ ըլլային ու մէմէկ կուալթ– չայ խմէին. հա՛պա (հանդարտօրէն–ընէամէ) ինքը կըլխատըրկէր, ինքն ալ կուտէր.— անխատար որ, հախը ուտել պէտք չէ, իրեն զաւակներէն այամիշ անել չունէր. իշտէ մէ՛կ որդւոն համար, սուտ չասիմ, հազարին երկուսը խար– ճից, ամա անոր համար թէքմիլ մարդ– արաւ ասիմ նէ, սուտ չէ, զերէ կար– դալ գրելը թէքմիլով սորվեցուց. իլլէ ուսմնակ լեզուն, շիտակն ասիմ ուէտքէյ տղայ նորա դիմացը կեղ է.

մէկ գիրք բացից տահա՛, ինա կայա, կիւրիւլ կիւրիւլ ծուրի պէս կերթայ, ա՛սլը մէմը չդադրիլ (դառնալով) աֆֆե- րիմ Պետրոս աղաս, եաշա՛. ([illegible]) ատ գիտաց առջեւդ մարդ չհա- նեցիր. ([illegible]) Նո՛ւ խառաշօ՛. ամա կենէ խելքս չիհասնիլ. իսա ի՞նչ պիտի ըլլայ, որ տունը միսաֆիր պի- տի բերէ. հածէ չէնէ ալէ պանին համար 'է գալու միսաֆիրները ([illegible]) չըլլա՞յ թէ չօրպաճիս գայ. ([illegible]) ո՞վ գիտնայ, իսա օրերս օրթայլխը մէկ խապէր մը կա՛ ([illegible]) չիգիտիմ Աստուած վկայ, բերանիս չերթալ ասելու. զամալը տղան. ([illegible]) ամա ձեռքէս ի՞նչ կուգայ. ալէմին ի՞նչ ըլլայ նէ, մեր փանիչին ալ գայիր ան կըլլայ տահա.



ամմա ([illegible]) եաշա՛ Պետրոս աղաս, իշալլահ իրեն զաւա- կին գէշ օրը չի տեսնիլ, զերէ ու- սում. — ուսում ունեցողին — հա՛խ եարտըմճը տըր. — իշտէ կնաց ու երկու տարիէն մենծաւոր եղաւ. ի՞նչ է. չէ նէ գէշ երազ կտեսնէ, հապա խաչերն ալ կուրծքին վերայ շարուած ըլլայ նէ. — ([illegible]) էյ, ասէք նայիմ. չէ նէ մե՛ր մէջէն տարիքներս անցած չըլլար նէ ածապայ, մենք հաւէսով չէ՞ր ուզէնայինք ատ պանը. ամա, մեզմէ կէչմի՛շ օլայ. ([illegible]) Իշ՛յ հածէ. կօզտէ տահա փիլիսոփայութիւն արածս. ինձմէն բան հարցնող կա՞յ որ, պանս գործս ձգիլ իմ ու երկայն բարակ քարոզութիւն կանչիմ նէ. չէ նէ վարդապետ եղանք. ([illegible]) հա՛յտը, հա՛յտը շուտ, տահա

պիտի երթամ ջուր պիտի բերիմ ու սափանին ալ հաղէր պիտի անիմ. (այդ միջոցին դուռը կզարնեն, Աւետիս յետոյ ա-ւելը կնոյս ու դէպի դուռը կբանայ ու ներս կհրաւիրէ) Աղա՛. ներս հրամմեցէք:

## ՏԵՍԻԼ Զ.

Գ. Պետրոս աղան տո՞ւնն է թէ ոչ:

Կ. (Աւելը ձեռը ետեւը պահելով) ո՛չ աղա:

Գ. Արդեօք չգիտե՞ս, ո՛ւր տեղ զինքը գտնալ կարելի է:

Կ. (զարմացմամբ) չգիտեմ աղա. նա թէրզին ալլալէմ կարելու բան տուած չէ ու:

Գ. Ի՞նչ ասիր.

Կ. Ըսելիքս (շփոթելով) Պետրոս աղաս, ալլալէմ իքին կնաց.—իքին տահա... պահ մը առաջ եկիլ ծամ տուիլ էր ու (յանկարծ) փոլիցին մէնծին:



Գ. (Ինքնիրեն կամաց) Լա՛ւ, լա՛ւ հասկացայ:

Կ. (Ուրախէն հարցնելով) Աղա՛. Պետրոս աղաս տունդ գայ նէ, ի՞նչպէս ասիմ հրամմանքիդ համար:

Գ. Ասիս թէ, Գաբրիէլ Բաբելեանը եկաւ ու գնաց:

Կ. Շա՛տ աղէկ աղա (կդառնայ ու կերթայ) Գաբրիէլ Բաբելեանը միտքս կպահիմ ամմա. (ծիծաղելով) հածէ թամամ Բաբելեան ասածին խատար կայ կիտիս խոա մարդը. տօղրուսու, անպէս մէկ խուձուր խօսքեր ասաց որ խիստ տիժարութիւնով ինչոքի հասկըցայ նէ՝ հասկըցայ. կինայիս փասծը հայնակ ալ էր, ամմա, օ՛լմայա խոա մարդը բաբելոնի խառնակութենէն մնացած մարդ ըլլայ. ո՜վ գիտնայ, անպէս խառնաշխոտ խօսքեր ասաց որ, խա՛ տարիքս եկած, ինչ

ես լսիլ էի, սանըրըմ ինչ ալ պա-
պաս. (ասելով Բոլոր ամբողջութեամբ դուրս կհանէ ու ինքը ներս մտնելով դուռը կփակէ) Է՜յ,
անձախ բաներէս խալսեցանք, մէկալ
քոմնաթի ջուրը մուրը մինչոքի ա-
ղայիս գալուն թամամցունինք նէ,
իշալլահ մէկ տեսօք սօյէն աֆֆե-
րիմ մը կլսինք (կուշէ դուռը երթալով):

~~~~

## ՏԵՍԻԼ Է.

Գ. (Հոգնած ներս կմտնէ) Հածէ Միրաքոս,
խսա առենս տահա մէկ քոմնաթին
հէ՞տն իս. ո՞ւր է նայիմ մէկալ սէֆալ-
նին ալ հազեր արիր մի:

Կ. (Շփոթեալ) Չէ՛ աղա. ես ան ալ աս
առենս ջախթան խալսած կըլլայի ամս,
ձեզմէ քիչ մը առաջ մէկ մարդ եկաւ



հոս, ու ձեզի հարցուց, ես ալ անոր
համար...

Գ. Ո՞վ էր աճապ, լաղապը հարցուցի՞ր
չէ նէ...

Կ. (Փոթալով) հարցուցի աղա (կմտածէ)
իք է.... ալալէմ Գաբրիէլ Բաբէ-
լօնեան է:

Գ. Աղէկ, աղէկ հասկըցայ, Բաբելօնեան
է. (Հրամայելով) հայտը Միրաքոս, դու
շուտ արա գնա գործդ խալսէ (Միրա-
քոս կերթայ կուշէ դուռը, Գէորգ աղան միա-
նակ մնացած) Աճապ ինչո՞ւ էկիլ էր պ.
Գաբրիէլը, աճապ աղբօրմէն խապէր
առիլ է. Թիֆ. կուգա՞յ կասիս չէ
նէ ես ինքս երթամ. (Այս միջոց Գաբրիէլ հանկա-
րծակի կերեւայ, Դէմը ուղղակի դէմն ու ետեւէն կեցած
կտրէ) չէ՛. դահա աղէկ է տունը նստիմ,
շատ պէտք բան ըլլայ նէ, նա նորէն
կուգայ ինծի. (կուշէ) Ըն Տէր Աստուած,
~~~~

մէյմը խուոր ախպարը գար ու տես-
նէինք ու սիրտերս միամիտ ըլլար.
ես շատը ինծի համար չեմ, շատը
իսա մեր հայ վախկոտ պապաներուն
ու մամաներուն համար եմ, որ մէյմը
թող տեսնին ու սիրտերը քիչմը թող
ռահաթնայ, չէ՛ քի պանին այէն
փայէն պէ՛ խապէր մնացած, գլուխ-
ները պատէպատ կզարնին, կուլան,
կողբան. ի՞նչ է պատճառը հարցու-
նիս նէ „հայպա որդիս սաղսալթ պի-
տի ըլլայ ու“ կասին մէյմնալ չին
ասիլ. դու կուզիս նէ հազար ասա՛,
կուզիս բերանովդ խուշ բռնէ, նոքա
կէնէ գիտցածները կասին. իշտէ մէկն
ալ մեր ծառան, Միրակոսը, քանի
օր է, սիրտը կոտրած ինչ արածը
գիտէ, ինչ ալ չարածը. հարցուր
քի, ի՞նչ է պատճառը տէյին նէ՝



„Հայպա փանիչս սաղսալթ պիտի ըլլայ
ու„ կասէ մէյմնալ չասիր. անոր հա-
մար ամէնքը թող տեսնեն ու խելքերը
չհասած բանին զօ՛ռ թող չանեն:

ՏԵՍԻԼ Ը.

Գ. (Ուրախութեամբ) Բարև ձեզ, անգլին Պետրոս աղա:

Պ. (Ուրախ դէմքով) Աստուծոյ բարին պ. Գաբրիէլ, իմ թանկագին բարեկամ, ասէք խնդրեմ, ի՞նչ բարի խապէր:

Գ. Ի՛նչ պիտի ըլլայ. ձիաւորներս եկաւ ու ասաց որ հեռաւորներս կէս ժամէն քաղաք կմտնի, ուրեմն խնդրեմ Պետրոս աղա դուք տունէն մի՛ հեռանաք. (Ելնալով) ես հիմա կուգամ, երթամ պ. Մարտիրոսին գտնամ:

Պ. (Առանձինն) Աղէկ, աղէկ այնպէս է նէ, մեկտեղ չիմ ելլիր. (Գաբրիէլին ըսէն բռնելով) ամա փաժալըթայ շատ մի ուշանաք, գէրէ, ես ծեր մարդ եմ, ով գիտնայ մէկէն շաշըրմիշ կանիմ եա ինչ կանիմ:

Գ. (Նշանալով) Ո՛չ ո՛չ Պետրոս աղա. միամիտ եղիք, այս վայրկեանիս կուգամ. (կերթայ):

Պ. (Սենեակին մէջ կուզէ մտածութեանը յետոյ դուռը բանալով, ձայն կուտայ, յետոյ ետ դառնալէն ծառային կկանչէ. ըսելով) Հաճէ Աւրակո՛ս. խալսեցա՞ր գործեդ չէնէ չէ:

~~~~

## ՏԵՍԻԼ Թ.

Ս. (Կուզէ դուռէն ներս կմտնայ) մէկ հատ ջուրը մնաց, ան ալ բերիմ նէ, ալայ մալայ խալսած կըլամ:



Պ. Ի՛նչ, անխաստարը թող մնայ, ան վերջն ալ մինքին է բերելու. դուն ինծի նայէ, շուտ արա՛ խանութ գնա՛ ու մեր Ստեփանին ասա՛ որ խանութը թող փակէ ու շուտով տուն թող գայ. շուտ, շուտ վազէ:

Ս. (Փութով դառնալով կերթայ) Աղէկ, աղէկ աղաս:

Պ. (Մինակն կուզէ) Ա՛նէ աղէկ է տահա. մեր հասա-գլուխ ծառաները ինչ պիտի կրնան անելու, նոքա էօմիւրինտէ այնպէս մարդ տեսած չին. աղէկութիւն ասինքէն ամօթով չմնանք. գէրէ քիչ մը առաջ մէկ պ. Գաբրիէլի լաղապը պիլէ հարցուցի նէ, շունէ չիտակ ասելու չկրցաւ, ամա Ստեփանս ինչխաստար ալ ըլլայ նէ կէնէ եաշ է, այդպէս բաներ պէճերմիշ կանէ. հէմ հագնի ինքը աչքով
~~~~

տեսնէ նէ, սիրտը քիչ մը կամուրնայ տաշա՛, անոր Թէմիզը կուգիս նէ, պէլքի խիքը պիլէ սալտաԹ երԹալու Հավէս կըլլայ:

~~~~~

## ՏԵՍԻԼ Ժ.

Գ. (Մաքուր ու նորերը հագած և զգեստին կոճակին տակէն ուսումնարանի մէջ յառաջադիմութեան համար տրուած ոսկէ շքանշանը (медаль) կախած ներս կմտնի) աՀա Պետրոս աղա, ես պատրաստ եմ այժմ եղբօրս ընդառաջ ելլելու:

Մ. (Նայելով մաքուր զգեստը հագած) Բարև ձեզ Պետրոս աղա. (Հայելիին առջև շրջուելով) ո՞ւր է մեծ որդիդ. ինչպէս լաւ բան կըլլար՝ եԹէ նա ալ այս տեղ գտնուէր:

Գ. ՄըխԹէՊետրոս աղան մեծ որդի մ՚ունի:

— 53 —

Ս. Այո՛ ունի. և շատ լաւ, շատ պարկեշտ տղայ է. բաւական ալ ուսում առած:

Գ. Պ. Սարտիրոս, արդեօք քանի՞ տարեկան կըլլայ:

Պ. (Գաբրիէլին մօտենալով) Որդիս Թէքմիլ 20 տարու 21-ին մէջն է:

Գ. (Գոհանալով) Ափսոս. ԵԹէ այդպէս է, անպատճառ ես պարտք կՀամարիմ զինքը իմ եղբօրս ներկայացնելու. բայց ինչո՞ւ տունը չէ:

Պ. Ձանս պ. Գաբրիէլ, իմն ալ նոր միտքս ընկաւ այս բանը, անոր Համար տաՀա նոր ծառային խանուԹ փաքցուցի, որ շուտով տուն ձայն տայ:

Գ. ԵԹէ այդպէս է, շատ լաւ, ես . . . (Այս միջոցին դէպ դրանին էտևէ կանչէն կատէ յայն կեանք ու յանկարծ կերպով):

~~~~~

## ՏԵՍԻԼ ԺԱ.

Զ. (Դուռը կբանայ ու մէջ տեղը կանգնած կհարցընէ) Домъ господина Петра Хлаузьяна этотъ самый, или по дальше?

Պ. (Աչքերը մէկ դռնէն առնելով) Նկա՛ւ, երթամ վրաս գլուխս փոխիմ:

Գ. (Ծփանալով ընտանիքին) Здѣсь, здѣсь, а кому желательно узнать?

Զ. Полковому командиру Папельяну?

Գ. А гдѣ онъ самъ, пріѣхалъ или нѣтъ?

Զ. Точно такъ, сей часъ изволилъ пріѣхать; ожидаетъ Васъ!

Մ. (Դուան քով անշարժ կկանգնի, իսկ Գաբրիէլը ուրախութեամբ դուրս ներսելով կերթայ) Ի՞նչպէս մարդ է աճապ, աղօրը կնմանի՞ աճապ:



## ՏԵՍԻԼ ԺԲ.

(Երկու կամ երեք վայրկեան դուրսը ուշանալնէրէն ետքը երկու եղբայր ձեռք ձեռքի բռնած ներս կմտնան. գնդապետը պատերազմական շորերով, և սուրը կողէն կախուած, կուրծքին վերայ ալ Ս. Գէորգայ խաչանշան կախած, սենեակի մէջ երկու եղբայր Գաբրիէլ և Միքայել կքալեն ու լուռ կերպիւ կխօսին):

Գ. (Զարմացմամբ բարձր) Միթէ:

Մ. (Նոյնպէս բարձր) Այո, հաւատացի՛ր, որ այդ հաստատ է, վասն զի ծառայութեան մէջ մտնալէս ետքը, երրորդ տարին ստացայ այս գնդապետութեան աստիճանը. և Տէրութիւնը շատ կսիրէ մեր Հայ ազգը, մանաւանդ անոր համար, որ իրենք միշտ հաւատարիմ և հոգւով քաջ են. անկէց ալ ի զատ, մեր ազգի պատմութեան մէջէն գիտէ, որ մեր

Հայ ազգը, չնայելով այն ժամանա-
կուայ տգիտութեան և անկարգու-
թեան, ինչքան քաջութեամբ յաղ-
թութիւններ արեր են իրենց թշնա-
մեաց դէմ. (նոյն) իսկ այժմ այս
լուսաւորեալ դարին մէջ և միան-
գամայն մեր Ռուս բարեկարգ Թա-
գաւորին ձեռքը տարակոյս չկայ, որ
ժամանակին մեծ և երևելի յաղթու-
թիւններ կրնան անել, մանաւանդ,
եթէ կամաց կամաց մեր բոլոր Հայ-
երը իմանան թէ այս ծառայութիւնը
որո՞ւն համար է, որ պիտի ընեն.
Ճշմարիտն ասեմ, մեր Հայերը ոչ թէ
լալով կամ ողբալով պէտք են իրենց
զաւակները այս ծառայութենէն ա-
զատելու աշխատին, այլ ընդհակա-
ռակն, պէտք են լալով և ողբալով
աղաչեն մեր Ռուս Թագաւորին, որ



իրենց զաւակներն ալ ընդունին այս
նոր զինուորականութեան մէջ, ի ցոյց
իւրոց այսքան տարուայ հանգստու-
թեան և պաշտպանութեան նովաւ,
շնորհակալութեան և երախտագի-
տութեան. և ամենևին հաստատ գի-
տեմ, որ մեր Հայերը մինչև անգամ
կյորդորեն անոնց, որոնք նոր զինուո-
րական կարգադրութեան անունը լսե-
լով, սկսեր էին ամէն հնարք ի գործ
դնել, որպէս զի իրենց զաւակները
անկէ ազատեն.—արդեօք չեն իրա-
ւու հարցներ. թէ մենք ամէնքս և
միասին որո՞ւն զաւակն եմք.—եթէ
միմիայն մեր Օգոստափառ Կայսեր,
որուն երկար կեանք միշտ պարտա-
կան եմք յԱստուծոյ խնդրել....

(Տեսարանի նաւէն զինուորական երաժշտաց եր-
գելը կսկսի լսուիլ ու երթալով զօրանալ,

մինչև անգամ միաբան բազմութեան զօրաց քայլերն ալ և յանկարծ, իբրև թէ տան քով մօտեցած կդադրի. յետոյ կլսուի հրամայողական բարձր այս խօսքերը. на́-пле-чо́! զօրաց հրացաններով հրամանը կատարելու ձայնը նոյնպէս կլսուի, ու երաժիշտները կսկսին այնտեղ դարձեալ երգել մարշ. և այդ միջոցին չորս հարիւրապետ սուրերը մերկացուցած և մէկ քաջ զինուորի ձեռք դրօշակը տուած ներս կմտնան) ։

### ՏԵՍԻԼ ԺԳ.

(Զինուորը դրօշակը կտանէ տան մէջ անկիւնը կկանգնեցնէ և կերթայ հարիւրապետաց քով կկանգնի).

**Միք.** (Ոտքի կանգնած) Завтра въ 10 часовъ утра!

**Զ.** (Միաբերան) Слушаемъ, Ваше Высокоблагородіе— (զինուորական ձևով հրաման կերպով ու մէկ վայրկեանէն բոլորէն կլսուի. Ружьи воль-но! на право! маршъ! և զօրքերը երգելով մարշով դուրս կերթան, և վարագոյրը կիջնէ).



## ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

### ՏԵՍԻԼ ԺԴ.

(Սենեակի ձևը անփոփոխ թողլով, ուրիշ քառանկիւնի սեղան մը սենեակի մէջ տեղը բացուած, վրան սպիտակ ծածկոյթ փռած, առաւօտեան թէյի պատրաստութեան ձևով, անոր քովը ցած աթոռի մը վրայ самоваръ դրած.)

**Գ.** (Բազմելով սենեակի մէջ մէյմը իր վերայ նայելէ, այս անգամ շուրջառն մուշտակը հագած, մէյմը սեղանին վերայ գաւաթներուն կարգին կերնէ. ողջունելով հետը գեղեցկուհին համբերութենէն արթնցածին, որոշեր չէ հրամայեր ինչ խմելու, իր գրպանէն ժամացոյցը հանելով) Թիֆ, աս անպիտանին ալ մոռցել իմ լարելու. ամա, երեկուան խաղապալըխին տօղրուսու, հաց կերածս պիլէ մոռցել իմ.

## ՏԵՍԻԼ ԺԵ.

Գ. (Գաբրիէլ դուռնէն ներս կուգայ և կէս ձայնով Պետրոս աղային կհարցնէ) Բարի լոյս Պետրոս աղա. ինչպէս, դեռ չարթընցա՞ւ եղբայրս:

Պ. (Նայելով կիսատ դողալով ձայնով) Ճշմարիտ չգիտեմ. ձայն մայն չլսուիր. գայիր.քուն կըլլայ տղայ. (յետոյ) զարար չունի. թող քուն ըլլայ, տահա կանուխ պիտի ըլլայ:

Գ. (Գրպանէն ժամացոյցը հանելով) Ժամը եօ՛թն է. կարծեմ ժամանակ է. չըլլայ թէ ուշանայ, պէտք է արթընցընել.— բայց, լաւ միտս եկաւ, ո՞ւր է Պետրոս աղա, հրամանքդ խոստացիլ էիր որդուդ բերելու. գիտես, որ ես ինծի պարտք համարեր եմ, իմ եղբօրս զինքը ներկայացընելու:



Պ. Շատ շնորհակալ եմ ձեզմէ պ. Գաբրիէլ. գիտէք, ես աւելի ուրախ կըլլամ թէ որ այդ աշխատութիւնը դուք վրաներդ առնէք ու կատարէք, զերէ գիտեմ, որ այսօր վաղը մըթլախ նորա ալ պիտի առնէն սալտաթ, պարէմ թող տեսնէ ու սիրտը ուրախացնէ, որ մեր հայերէն փոլքովնիք ալ կըլլան եղեր է:

Գ. Պետրոս աղա, ո՞վ կասէ թէ չըլլար. հաւատա՛, թէ որ լաւ ուսում առած ըլլայ և սիրով ծառայէ իրեն երդմնած թագաւորին այնպէս, ինչպէս թէ իրեն հայրենիքին սուրբ պարտք ճանչնալով, անպատճառ ո՛չ թէ փոլքովնիք, այլ կէներալ ալ կրնայ ըլլալ:

Պ. (Աթոռի մը վերայ նստելով) Պարոն Գաբրիէլ, մի՛թէ այս մեր հայրենիքն է. մե՛ր հայրենիքը Հայաստանը չէ՞ որ:

Գ. (Քիչ մը առած Պետրոս աղային առաջը կ՚երթայ)
Անգին Պետրոս աղա. այդ խօսքերուդ
դիմացը, ասելու խօսքերս, խնդրեմ
ուշադրութեամբ լսէ.—միթէ կարո՞ղ
է մէկմը ասել, թէ մեր հայրենիքը
չէ Հայաստան. ո՛չ ո՛չ. սակայն, ի՞նչ
օգուտ այն տեսակ հայրենիքէն մը, որ
իւր զաւակները այսօրուան օրս խնա-
մելու ո՛չ մէկ հնարք չունի. դարձեալ.
ի՞նչ օգուտ այն հայրենիքէն, որն
իւր ծերութեան մէջ, իւր զաւակնե-
րէն մատնուած օտար թշնամեաց
ձեռքը կկենայ. բայց ես և մենք ա-
մէնքս կրնանք և պէտք է պար-
ծենալ, որ մեր հայրենիքն այն է,
որն որ միշտ իւր զաւակաց սիրով
խնամելու հնարք ունի և կաշխատի,
զաւակներն ալ իրենց հօր սէրը տես-
նելով՝ հայրենեաց սիրով վառուած,



անտարակոյս երբէք ես չեմ կենար
ամեն կերպիւ օգնելու նորա, ուրեմն
կմնայ այժմ ձեզ հարցնել ազնուա-
սիրտ Պետրոս աղա, արդեօք ո՞րն
աւելի ընդունելի և ախորժելի կերևայ
ձեզ համար. հարկաւ որուն մէջը որ
սէրը կայ, այսինքն երկրորդը:
Պ. ~~Այդպէս է, այդպէս է. պ. Գաբրիէլ:~~
Գ. Ասկէց զատ, կասիս, որ, ի հարկէ
միայն հրամանքդ չես, շատերը այդ
մտքէն են, թէ միթէ Հայաստանը
չէ՞ր մեր հայրենիքն. այո՛, այդպէս է.
Հայաստանն է մեր սկզբնական հայ-
րենիքը. ~~բայց ի՞նչ~~ օգուտ:
Պ. (Զարմացմամբ) Աղբար, ատ ալ կալամի
է. օգուտը ինծի....
Գ. (Տեղէն ելլելով) Պետրոս աղա, խըն-
րեմ լսեցէք. հարկաւ ինչ որ պիտի
ասիմ նէ, առանց հիման չէ. կամ

Թէ անօգուտ ըլլալուն փաստը չը-
ցուցընեմ նէ, այն ժամանակ դուք
չէ (կողմ յետոյ ցուցընելով), այլ բոլորը
կարող էն իմ դէմ այդ մասին բո-
ղոքել.—ուստի խնդրեմ լսեցէք (կնայէ)
ինչ օգուտ Հայաստանի մեր հայ-
րենիքն եղած էն, մինչդեռ այսօրուան
օ՛րս մեր տգիտութեամբ ասեմ, ան-
միաբանութեամբ ասեմ, չա՛ր նա-
խանձով ասեմ, վերջապէս մէկով
թէ միւսով ամբողջապէս ձեռքերէս
կորուսած ու այն ժամանակուայ թըշ-
նամեաց ձեռքը մատնած ձգած էինք,
մե՛նք ալ աշխարհիս երեսը մօրմէ
որբ մնացածի նման գլուխներս ո՞ր
կողմը դնելներս չէինք գիտեր.—մի՞-
թէ այն ժամանակ մեր Հայաստանը
մեզ կարող եղաւ հայր ըլլալ և պա-
հել, կամ թէ մենք հարազատ որդի



ըլլալով կարողացա՞նք օգնել սրան.
ո՛չ ո՛չ. ո՛չ մէկը և ո՛չ միւսը կըրցաւ
ըլլալ.—սակայն մինչև ցայսօր ամե-
նուն բերնէն կլսես, „Թէ մեր մայր
Հայաստանը կողբայ ու զաւակներէն
օգնութիւն կսպասէ. և ոմանք ալ ի
պարծանս մարդկան կձևացնեն թէ
ողբակից են:“ բայց ինչ օգուտ այդ
տեսակ հայրենիքէն, ինչ օգուտ այդ
տեսակ ողբակից զաւակէն, մինչդեռ
երկուքն ալ մոլորած ու մաշած մնա-
ցել են. այնու ամենայնիւ (թէլէն ելլէ-
լով) պարզ երեսով կասեմ. եթէ
ծուռ ըլլայ ասելիքս, իրաւունք
կուտամ Պետրոս աղա, ձեզ ալ, ա-
մե՛նուն ալ զայն ուղղել. բայց
ինչպէս որ մինչև ցայժմ, այնպէս
ալ ասկէ վերջը, բոլոր ասելիքս,
յոյս ունիմ, շիտակ ասել. այո՛, պարզ
դէմքով և սրտով կասիմ, որ ճշմա-

ըլլա մեր ամենուս հայրենիքն և հայրը էր և է մեր Աստուածապսակ Օգոստոս Կայսրն Ռուսաց. վասն զի, քանի որ մենք, Հայերս, անհայր և անմայր մնացած էինք, միմիայն Ռուսաց Կայսրը եղաւ մեզ բարի հայր և գորովագութ մայր.—քանի որ մեր հայ եղբարցը օտար տէրութիւններ արտօնութիւններ կուտամք ասելով՝ կխաբէին ու արիւնները կխմէին, այն ատեն մեր Ռուսաց Կայսրը իւր ողորմած սրտով կերթար ու թշնամեաց յաղթելով զմեզ կազատէր իրեն հովանաւորութեան տակ առնելով.—քանի որ մեր Հայաստանը զաւակներէն մասնուած թշնամեաց ձեռքը կողոպուտ դարձած հիմնայատակ կործանելու վերայ էր, մեր հզօր Ռուսաց Կայսրը գնաց, զանոնք



սաստկապէս անոր սահմաններէն հեռի քշելով, առաւ իւր խնամարկութեան յանձնեց.—վերջապէս, երբոր մեր Սուրբ եկեղեցին անգամ թշնամեաց ձեռքը ոտնակոխ ըլլալու և կողոպտուելու վերայ էր, այն ատենն մինչև անգամ, մեր Ուղղափառ Քրիստոնեայ Ռուսաց Պայծառափայլ Կայսրը, սահմանի գետերը արեան հեղեղ դարձնելով ազատեց զայն անոնց ձեռքէն (Թէլ հանգէստ առնելով). ուրեմն ձեզ հարցնեմ, Պետրոս աղա. ասէք խնդրեմ, ո՞վ է մեր հայրը, ո՞վ է մեր մայրը, որո՞ւն արդեօք մենք Հայերս պարտական եմք այսօրուան օ՛րս շնորհակալ ըլլալու. Ի՞նչ օգուտ Հայաստանը մեր հայրենիքն եղածէն կամ ի՞նչ պարծանք մեր, Հայաստանի որդի—եղածներէս. ամենևին ո՛չ մէկ

օգուտ և ոչ մէկ պարծանք, կարծեմ ես միայն չէ, այլ ամենքդ կըրնաք վկայել, որ այսօրուան օ՛րս մեր հաստատ հայրն է Ռուսաց Վեհափառ Կայսրը և նորա տէրութիւնն ալ մեր հայրենիքն, վասն զի մինչև ցայսօր զմեզ անփոփոխ սիրով պահել է և կպահէ, քանի որ մենք ալ սէր և իցէ ծառայութիւն իրմէ չխնայիմք ու չխաբիմք.—վա՛յ մեզ, եթէ այս տեսակ բարերարի մը սրտի սէր և իցէ ապերախտութիւն անելով դժուարութիւն պատճառենք. հաւատացէք, որ ո՛չ այս աշխարհիս վերայ մեյմնալ հանգստութիւն կըրնամք գտնալ և ո՛չ անդի աշխարհ Աստուծոյ առջև:

Գ. (Հանդարտութեամբ) Շատ աղէկ պ. Գաբրիէլ. ամեն ասածներդ շիտակ որ



այնպէս է. ամենևին հիչ մէկ բան ասելու չիմ կընար ադոնց դիմացը, հէմ եկեր մէկմը ելլէ խելքէն բան մը փչելու ըլլայ նէ, ճշմարիտ ասեմ, ան մարդը շատ նամքէօռ մարդ պիտի ըլլայ, զերէ իմ խելքս շատ կտրուկ չըլլայ ալ նէ, ես ալ շատ անգամ շատ մարդու առ խօսքերուդ պէս ասիլ էի. աղէկ ամա, պ. Գաբրիէլ, հրամանքդ մէկ բան մ՛ալ ասիր, որ քիչ մը ինծի խուճուր երևցաւ:

Գ. Ըսէք, Պետրոս աղա, ասէք խնդրեմ. ես ամենևին չեմ ձանձրանար զայն ձեզ բացատրելու:

## ՏԵՍԻԼ ԺԶ.

Ս. (Մէկը կողմէ դուռնէն ներս կուգայ և ծռելով կ՚բարևէ) Բարի լոյս ձեզ, բարի եկել էք դուք մեզ:

Պ. (Ձեռքով դէպի Ստեփանին ցուցնելով) պ. Գաբրիէլ, այս մեծ որդիս է, Ստեփանոս, խնդրեմ բարեկամ եղէք:

Գ. (Ձեռքը առնելով) Շատ ուրախ եմ, շատ ուրախ. ձեր բարեկամին Կանտոխտալթ համալսարանի Գաբրիէլ Բաբելեան:

Պ. (Որդւոյն) Ստեփա՛ն, դու մէկ սահաթ գնա՛ ու քու աթեսթաթդ առ ու բե՛ր. նայէ չուշանաս.

Ս. Շա՛տ լաւ (Կ'ելլայ):

Գ. Շատուած բաշխէ. շատ պարկեշտ և քաղաքավարի երիտասարդ է եղեր որդիդ:

Պ. Ըհա անոր համար էր, որ քիչ մը առաջ ըսի ձեզ, թէ ձեր ըսած խօսքերուն մէջէն մէկը քիչ մը խուճուր երևցաւ ինծի, տէ՛ր:

Գ. (Փոխելով) Իրա՛ւ, Պետրոս աղա. ես զայն խոստացել էի ձեզ բացատրե-



լու, ասէք խնդրեմ, ո՞ր խօսքն է ձեզ քիչ մը ծանր երևցածը:

Պ. Դուք ասիք, որ „վա՛յ մեզ, եթէ այս տեսակ բարերարի սրտի դժուարութիւն տամք որ և իցէ ապերախտութիւն անելով“. աղէկ ամա, դո՛ւք ասէք պ. Գաբրիէլ, ի՞նչ հնարք մինքին է գտնել, որ այդ բանը չըլլայ. իշտէ հրամանքդ տեսար, մէկն ալ իմ որդիս է, Ստեփանոս. խա տղան քու որդիդ ըլլար, ի՞նչ կանէիր, կհանէիր կուտայիր, չէ նէ ազատելու ճամբան կըփնտռէիր. ամա խիստ աղէկ կիտեմ, որ ազատելու ճամբան չփնտռիմ նէ, սիրտս կտոր կտոր կըլլայ, իլլէ մօրը լացը տեսնիմ. ելլա՛յ ու մեղքցայ. ու խալսեցընելու ճամբան նայեցայ, իշտէ, խաթէր խաթէմէզ, մեր թագաւո-

րին դիմացը ապերախտ եղայ գնաց տայ.—Հելպէթ որդի ունեցողը միայն ես չեմ ըլլար, իշտէ գնաց ու թագաւորին անկաճը թէքմիլով ինկաւ, առանց այլ և այլի սիրտը մեզմէ ցաւեցաւ գնաց. (Այս ըսելէն յետոյ) Թէև ես առջի բերան թահմին չէր անէի, որ մեր Հայէն կառնէ տէյին ամա, չինտը մէկին մէկալին շատ հարցնելէս ետքը հաստատ իմացայ, որ մեր Հայոց ազգէն ալ պէտի առնէ անպատճառ:

Գ. (Պնդելով) Այո՛, այո՛, Պետրոս աղա. թէ որ անկաճը իյնայ, աւելի սիրտը կցաւի, մանաւանդ մեր Հայ ազգէն, վասն զի մենք, որ փոխանակ....

Պ. ([illegible]) պ. Գաբրիէլ, ճանըմ մեր ազգը փոխվելէկ ունի ու, ախըռ մէջը գրուած է, որ „Հայերը սալտանաթ տալէն ազատ են“ տէյին ու:



Գ. (Մտածելով) Պետրոս աղա. հարցնիմ հրամանքէդ, դուք ինքնիդ ձեր պատասխանով կրնաք իմանալ, որ այն ատեն մեզի մե՛ծ բարերարութիւն էր այն փոխվելէկը, բայց այժմ, թէ որ նորէն անոր անունը տալով ուզենանք ծառայութենէ ազատիլ նէ, գիտցէք, որ մեր ազգին մեծ ամօթ և անպատուութիւն է ո՛չ թէ միայն մեր թագաւորին առջև, այլ ամեն օտար թագաւորաց առջև:

Պ. (Զարմանալով) Ինչո՞ւ պ. Գաբրիէլ մի՞թէ....

Գ. Խնդրեմ համբերեցէք Պետրոս աղա. ես ասեմ, ու դուք ինքերդ կիմանաք, թէ ինչո՛ւ համար այնպէս է. ասէք խնդրեմ, զորօրինակ ձեր տունը մէկ միսաֆիր մը գայ, ու եկած օրը ուզենայ ձեզ հետ տան մէջ աշխա-

տեսլու, մինթէ դուք յօժար կըլլա՞ք անոր:

Պ. Ո՛չ. մէկմը մարդու տուն միսաֆիր գայ նէ, բան անելո՞ւ կուգայ ինչ:

Գ. Շա՛տ լաւ, Պետրոս աղա, իմ ասելս ալ այդ էր.—այժմ ասէք խնդրեմ, միսաֆիր ասածդ քանի՞ օր կըլլայ:

Պ. Հէ՞, միսաֆիր ասածդ երեք կամ չորս օր կըլլայ տահայ. շատ շատ մէկ շաբաթ:

Գ. Շա՛տ լաւ, Պետրոս աղա. գնաց ու մէկ շաբաթ եղաւ. անկէ վերջը այն միսաֆիրը երթայ ու քու տունդ բնակելու ըլլայ, որովհետև շատ հաւնիլէ տունիդ կառավարութեան. էյ, ի՞նչպէս կըկարծես, անկէ վերջը միակերպ նստի, ուտէ, խմէ տունիդ մէջ առանց մէկ բանին ծայրէն բռնելու,



բան կասի՞ս թէ ոչ. ի հարկէ, չնորհակալութիւնն ալ պակաս չըլլայ, այնու ամենայնիւ ինքդ քեզ չես ասիր, թէ „ախբար կօգտէ տահա՛, միսաֆիր ասածդ „երեք օր, չորս օր, շատ շատ մէկ շաբաթ. այս ինչ պիտի ըլլայ, ես միսաֆի՛ր եմ ասէ ու մէկ խարէր նստի, ուտէ, խմէ ու մէկ բան չանէ, կըլլայ մի եա՛“ կասի՞ս թէ չես ասիր, Պետրոս աղա:

Պ. (Մտածելով) Կասիմ. հէմ ես չէ, տօղրուսու ով ալ ըլլայ նէ՝ կասէ:

Գ. Շա՛տ լաւ, Պետրոս աղա. մէկ հարցմունք մ՚ալ մնաց, անոր ալ թէ որ պատասխանը տաք, յուսամ, որ բոլոր ծանրութիւնը կփարատի կերթայ. ասէք խնդրեմ, եթէ օր մը միտքերդ մէկ հարկաւոր բան մը իյնայ, ու ուզենաք, որ այն բանը միսաֆիրը անէ, նա ալ ելլէ ու չէ,

չիմ անիլ ասէ. ի՞նչպէս կըլլայ, սրտերուդ ծանր կերթայ, թէ ոչ. չի՞ք ասիլ արդեօք. „այսչափ ժամանակ առանց մէկ քափիքի ես քեզի ուտեցրնեմ, խմցընեմ ու, մէկ գործս ինկած իքէն, ա՛ն ալ ելլիս ու չիմ անիլ ասիս հէ՞„ . . .

Պ. (Նեղանալով) Հէ. չի՞մ ասիլ. Աստուած վկայ թող ըլլայ, որ ան սահաթին փառթալները ձեռքը տալով դուռը դուրսէն փակել կուտամ:

Գ. (Հանդարտութեամբ) Ո՛չ, ո՛չ, Պետրոս աղա: Այդ բանը մենք ու մեր խելքով մարդիկ կանեն միմիայն. բայց թագաւորը մարդ ալ ըլլայ նէ, գիտցէք որ մեր խելքով բան չի աներ նա. շատ կարելի է, մեր ազգի մինչև ցայսօր քանի ու քանի պակասութիւնները ու յան-



ցանքները տեսիլ է ու ամենևին ոչ թէ նեղանալ, այլ իւր ողորմած հայրական սէրը վրաներէս չէ պակսեցուցած. և դարձեալ, թէ որ մենք այսքան տարիներէն ետքը մինչև ցայսօր մեզի միսաֆիրի տեղ դնելով, ելլենք ու մէկ այս կամքի չուզենալու ձևեր (որոնք Աստուած մեզի հեռու պահէ) անելու ըլլանք նէ ա՛լ, դարձեալ նա ամենևին չբարկանար, վասն զի նա գիտէ, որ մենք այս տեսակ ձևեր կանինքնէ ալ, չէ՛ այնպէս, ինչպէս այն միսաֆիրը միմիայն իրեն կամակորութեամբ, այլ միմիայն մեղքնալով մեր զաւակները. բայց Պետրոս աղա, պէտք է միտքերս բերեմք, որ ինչպէս մենք մեր զաւակներուն վերայ կցաւիմք, ասելով թէ, մի՛ գուցէ նեղութիւն քաշին, անոր տասնա-

պատիկը նա որ ամենուս մեր Հայրն է, մեր վրայ ցաւելով այժմէն կաշխատի, միտքը դնելով, չըլլայ թէ օ՞ր մը իմ զաւակներս, առանց զէնքի մնալով, իբրև առանց թևի, թշնամեաց զոհ ըլլան և այս մեր Հայրենիքը աւազակաց ապաստան. ուրեմն (հոգմ.) կարծեմ այսչափով կարողացանք հասկնալ, թէ ասկէ վերջը ամենևին պէտք չէ ո՛չ փուխվելէկլի և ո՛չ ռէփոլթալթի անուն տամք, այլ Հայրենեաց սիրով վառուած ամենքս միակամ և միախոհ պէտք եմք զինուոր դառնամք, յօժարութիւն սրտի Մ՚եր Օգոստոս Աղեքսանդր Բ Կայսեր և ի պայծառութիւն մեր Հայրենեաց: Գիտցէք, որ Հայրենիք ասելով. մեր Հայաստանի գոնեա՛ մէկ մասը ասոր մէջն է. Կեցցէ Կայսրն Մ՚եր Աղեքսանդր Բ,



կեցցէ յաւերժ մեր Հայրենիք:

Փ. Պարոն Գաբրիէլ. մեծապէս ձեզմէ շնորհակալ եմ, (հոգմ.): տեսէք եղբարք, ինչ ասել է ուսում ասելը. գնա՛ նայիմ ասկից վերջը խելքիդ չհասած բանին դատողութիւն արա՛. ասկից վերջը քա՛ւ լիցի. (ուրախութեամբ, ծափեր) Ճշմարիտն ասեմ, ես ծերացած չըլլայի, առանց այլ և այլի . . .

(Պատի ժամացոյցը 9 կզարնէ. Աշակերտներն սեղանէ վրայէ կ'ելլեն զանգակի ձայն կուգայ, պ. Գաբրիէլը ձայն լսելուն պէս կնետուի դէպի աշակերտը. եւ Պետրոս տղան մնայուն մնացած, հոգմ.).

Գ. Ըմա էշու պէս կանչեցի հա՛. թէ որ մարդը ձայնս լսից, ու պ. Գաբրիէլէն հարցընէ իմանայ նէ, ամա ցի՛ն հա՛. թ՚իւփ. ինչո՞ւ չապպըրեցի, որ իմ ըլլալըս չասէ:

## ՏԵՍԻԼ ԺԷ.

Գր. (Ննջարանէն կելնէ ու փողոցի դրսի դուռը կերթայ կբանայ ու կկանչէ) Вѣстовой! ступай полковникъ требуетъ.

Ձ. (Սերս կմտնայ և կերթայ ողջունէ ննջարանը. Դաճբրէկը նոյնպէս զինուորին ետևէն ննջարան կերթայ. Երկու վայրկեան ներսը ուշանալէն ետքը զինուորը յետ դառնալ մը ընելով ողջունէ դուրս կերթայ. Իսկ Պետրոս աղան մեծ կողմէ դրան քով կանգնած յետքէն մէյմը մէկը մէյմը միւս կողմերէն տանելով ահով դողալ կը կենայ. այդ միջոցին դուրսի դռնէն կուգայ Միքայէլը, ու երբ կտեսնէ Պետրոս աղայի ահով դողալ կեցածը. կամաց ոտքի մատերուն վերայ կոխելով մօտենալ ու գլխով հարցման նշաններ անել, քեզ ժամանակ այդ տեսակ նշաններով խօսելներէն վերջը Միքայէլս կամաց [illegible] մը ընել. և լսածին առած պատին [illegible] ու վերջ, Բայց ննջարանէն ոտքի ձայներ լսելով շուտով ետ-կառը կնետէ :)

---



## ՏԵՍԻԼ ԺԸ.

Միք. (Ողջունելով) Բարի լոյս ձեզ:

Գ. (Դառնալով) Աստուծոյ բարին քեզ, Միքայէլ աղա:

Գ. (Ուղևորը ետևէն ներս մտնալով. Պետրոս աղային ներկայացնէ) Այս պատուական ծերուկն է այս տան տէրը, Պետրոս աղան. Ինքը սիրով հաճութիւն ցոյց տուաւ ձեզ հիւր ընդունելու իւր տան մէջ:

Միք. (Ծերունին յետոյ առնելով) Շատ շնորհակալ եմ ձեզմէ, Պետրոս աղա. (Բէյք ռեզանէ քով նստելով, կհրամցանէ նոյն աւ-ն տեղը) Սաբ խնդրեմ, Պետրոս աղա. Ինչ նոր բան կայ ձեր քաղաքին մէջ. կարծեմ բաւական հայ տունոր կգտնուի այս տեղ:

Գ. (Գոտելով ոռնու մը կամոն ու կնոջ ռեգանին մէկ կողմը) Հրամմէրէք աղա. յիսուն կամ

վաթսուն տունի չափ. պիտի ըլլայ:
(Գաբրիէլը հարցնող աչքով մը ու կնոջ եղբօր հետ, իսկ Մարտիրոսը հօրը հետ շինել ու աչքի գաւառը կընէ գծագրելու աչքը, և յետոյ ըսէ հարցին պատասխան).

Մհք. Ինչո՞վ կպարապին. Լա՞ւ կեանք կանցընեն:

Գ. Առ-տուր կանին. փառք Աստուծոյ, գէշ չին. աղքատներս շատ չէ:

Մհք. Այս տեղ դուք եկեղեցի՞ ալ ունիք:

Գ. Հրամել էք աղա, ունինք. անոր աղպարը վարժատուն ալ ունինք:

Մհք. Շատ աշակերտ կա՞ն վարժատան մէջ:

Գ. Ոչ խիստ շատ չէ, 25 կամ 26 տղայ է եղածը:

Մհք. Ինչ. գիտեմ ո՞ր Թուրքերէն ալ կսորվեցնեն:

Գ. (Իբրև թէ թէյով բերանը այրած յետով կծածկէ



ու ուզածին պէս գլուխը տանելով հօրը հաւան)
Հրամ—մե—ըր—էք:

Գ. (Տեսնելով որ Միհրանին բերանը խօսել է, նոր տեղ ինքը հարցուպատասխանէ). այո՛ կսորվեցնեն. ես անցեալ օր գնացի տեսայ. բաւական լաւ վարժապետ ունին, տղայքն ալ շա՛տ ջերմեռանդութեամբ կսորվին, առաւել լսեր են թէ սալտաթ պիտի երթան. և ինչ զարմանալի բան. տղայքը աւելի ուրախ են, քան թէ անոնց ծնողքը. միակերպ բերաններէն կլսիս մէկը միւսին կպարծենայ. „ես սալտաթ երթամ՝ նէ, աֆիցեռ կըլլամ, միւսը թէ ես աղէկ պիտի սորվեմ, որ սալտաթ երթամ նէ կէներալ ըլլամ“ և այլն և այլն...

Գ. Հրամերէք աղա. այդպէս է. գաւր Աստուծմով է տայ. մանկտունները այնպէս հաւէս ինկիլ են, որ խա-

ղալու ժամանակ ամէն մէկը, մէկ մէկ փայտ ձեռքերը առած սալտամթի պէս թալիմ կուտան. մէջերէն պառապան չալողը մը, քօմանտրվալթ անողը մը:

Միք. (ծաղրելով) Շատ լաւ, շատ լաւ, ինչ զովելի բան. Պետրոս աղա, աշխատեցէք միմիայն ձեր կողմանէ տղայոց սիրտերը չկոտրել. ընդհակառակն ամէն ջանք ի գործ դնել, որ տղայք կատարեալ ուսում առնուն, որպէս զի դուք պարտական չինաք նոցա առջև:

Գ. Այդ կողմանէ Պետրոս աղան պարծանքի արժանի է. վասն զի իւր մէկ որդուն, ես տեսայ շատ լաւ կրթել է. շատ աչքաբաց և համեստ երիտասարդ է:



Միք. Պետրոս աղա. ո՞ւր է, ինչո՞ւ չէ եկած որդիդ:

Պ. (Ներսէսը տեղէն կելնէ ու կերթայ կուլէ դուռը առնելով) Նայիմ՝ պէլքի էկիլ է:

## ՏԵՍԻԼ ԺԹ.

Ս. (Հօրը առջև ելլելով ձեռքը կառնայ և երկուքը ներս կմտնան) բարի լոյս ձեզ. (կծռէ և կհանգչի).

Գ. Աստուծոյ բարին քեզ պ. Ստեփաննոս. (տեղէն կելնէ Ստեփաննոսին յառաջէն բռնած տանը կբերէ կնստացնէ) հրամէ մեզ հետ թէյ խմելու:

Պ. (Թուղթը գնդապետին տալով) Այս իմ որդուս ուսում առածին ու խալսածին թուղթն է:

Միք. (Թուղթը կառնու կբանայ ու լուռ կկարդայ) Շատ լաւ. ասել է թէ, Պետրոս

աղա, որդիդ այս նոր զինուորական կարգադրութեամբ միմիայն մէկ տարի ու վեց ամիս պէտք է ծառայէ, անկէ վերջը ազատ է, վասն զի բաւական ուսումն առած է:

Գ. (նստելով) Աղա՛. թէեւ ես աղէկ հասկըցիլ իմ, որ ամենուս ալ պարտքն է 21 տարեկան եղածով անպատճառ ծառայել զինուորականութեան մէջ, բայց չգիտեմ, ահաւ 68 տարեկան ծերերուն որդոցն ալ կանոնն չէ՞ նէ չէ, զերէ . . . .

Մէք. Գէորգ աղա հրամանքդ քանի՞ տարու կըլլաս:

Գ. Ես իշտէ աս տարի հոկտեմբերի գլխով 67 թամամ արի 68-ին մէջ մտայ:

Մէք. Միթէ այդքան կաս. էյ շատ լաւ. այդ որդուզմէ մեծն ունի՞ս թէ ոչ:



Գ. Չէ, չունիմ աղա. Ստեփանս առջինեկս է. ես ալ անոր համար աշխատեցի նորան ուսում տամ. փառք Աստուծոյ, իշտէ ամսատարը արժանի եղայ տեսնելու. ամա միտքս դրել էի, որ ծերութեքս ինծի ան որդիս ձեռքիս գաւազան կըլլայ, անկէց ալ պաշխայ, փառք Տիրոջս, „աշըմը աշատըմ, եաշըմը եաշատըմ“ վաղը մէկալ օր ետեւէս լացող ու աչքս մէկ աւուճ հող լեցընող ունիմ տէի, խընտումով կեցիլ էի. ամա կնայիմ, որ սա նոր կանոնով աս բաները իմ ճակատս գրուած չէ՛ եղել է:

Մէք. Ո՛չ ո՛չ, Գէորգ աղա. այդպէս մի՛ ասէք, վասն զի ինչքան որ մե՛նք մեզի համար միայն միտք կանինք նէ, անոր տասնապատիկը, այդ նոր կարգադրութիւնը անոնք մեզ համար

*միտք արել է ու այնպէս դրել է այն կարգերն ու կանոնները* (առ Սուքիան)

Молодой человѣкъ, давно Вы окончили курсъ?

Ս. (Ոտքի ելնելով) Третій годъ.

(Այդ միջոցին ծերունու դէմքը ուրախ երեւոյթ ունէր, դէմքը գունաւորւում. երբեմն իր տատանելուն կուզէր օգնել և երկրորդին խնդրել).

Մ՛կր. А съ Вами многіе еще окончили?

Ս. Толькое трое, одинъ съ золотой медалью.

Մ՛կր. Почему-же Вы не удостоились получить ея?

Ս. Не смотря на всѣ старанія мои, ни какъ не могъ получить, потому что съ Латынскаго языка не могъ получить удовлетворительную цыфру пять, но я очень благодаренъ, что съ главнаго предмета могъ хорошо здать, а именно съ Русскаго языка, потому что теперь составляетъ самый необходимый предметъ по всесословной воинской повинности.

Մ՛կր. Вѣроятно Вы съ удовольствіемъ поступили бъ на военную службу?

Ս. Это нисколько отъ меня не зависитъ.

Մ՛կր. А отъ кого-же?



Ս. Мнѣ кажется, что отъ моего папаши.

Մ՛կր. Почему это такъ?

Ս. Потому что я читалъ въ уставѣ о всесословной воинской повинности, гдѣ 45 статья буквально говоритъ, что старшіе дѣти избавляются у коихъ родители превзошли 55 лѣтъ отъ роду, а другіе дѣти малолѣтни.

Մ՛կր. (Առ ծերունին) *Պետրոս աղա. միթէ Սուքիասը ձեր է՞ն մեծ որդին է:*

Պ. *Հրամմերէք աղա. Թէև ունիմ տաճա մանչեր, ամա անոնք շատ մանր են:*

Մ՛կր. *Սուքիասնուէն փոքրը քանի՞ տարեկան է:*

Պ. *Սուքիասէն փոքրը աղջիկս է, Մաշինքաս, անկէց ալ փոքրը Սիմօնն է, տաճա տասներկու տարեկան տղայ է:*

Մ՛կր. *Էյ Պետրոս աղա, հրամմեքդ գիտէ՞ք, որ որդիդ Սուքիասը ազատ*

է զինուորական ծառայութենէ. վասն զի այն, որ քիչ մը առաջ ասել էի, թէ մեր ինքնակալ ողորմած Կայսրը, մեզմէ աւելի մեզ համար կմտածէ տէրինէ, ա՛ն ահա այս է. չնայելով որ Ստեփանը 21 տարեկան է, այնու ամենայնիւ, նայէ ինչ ողորմածսըրտութիւն թագաւորին արածը, որ գրել ու հաստատել է կանոնին մէջ, որ „ծնողք մը, որոյ տարիքը 55-էն վեր է և մեծ որդուն ետևէն հասած որդի չունենայ, այն մարդու մեծ որդին ազատ կմնայ ծառայութենէ, իրեն ծնողքը ծերութեան ժամանակ խնամելու և կերակրելու համար„:

Գ. (Ուրախութեամբ) Ընդունեցէք իմ Ստեփանս զինուոր ըլլալու չէ՞, — եթէ այդ բանը մեր ողորմած թագաւորը



մեզի համար միտք արել է նէ, Աստուած հոգիս թող չառնու, մինչև մէկալ որդուս ալ ուսում տամ, ու իմ ձեռքովս թագաւորին պաշտօնին անեմ, որ նորա աղէկութիւն արածին գիմաց ես նամքէօռ չմնամ. Կեցցէ մեր ողորմած թագաւորը, որ ուրիշ թագաւորները օրինակ առնեն:

(Գնդապետն, այսինքն պոլկովնիկն եկեղէն բաղմաբնեան զօրաց գալստեան յայտ կլինի՝ երգելով կղօրանդ. Վերջապէս հրամայողական յայտ կլինի. стой! равняться! на пле-чо! այս որ կլինի գնդապետը ոտքերին կեցնէ ու զինուորի ժամացոյցը հանելով կնայի ու ... կերթայ, յանկարծ ... գնդապետը կձայնէ զօրաց ասելով. здравствуйте ребята! զօրաց պատասխանը. здравія желаемъ Ваше Высокоблагородіе. այդ միջոցին ... միջի ոտքերը կկերցնեն ու կմաքրեն. Եւ ... երաժիշտները զօրաց ... երգել.)

## ՏԵՍԻԼ Ի.

(Գնդապետը և չորս հարիւրապետ սուրերը մերկացուցած ու նոյն դրօշակիր զինուորը ներս կմտնան կկանգնին, դրօշակիր զինուորը կերթայ սենեակի անկիւնէն դրօշակը կառնու ու չորս հարիւրապետաց հետ մերկ սրով դուրս կերթան. այդ միջոցին երաժշտաց երգը կդադրի ու զօրաց քովէն հրամայողական ձայն կլսուի. на кра-улъ! на пле-чо!—на пра-во! ружьи вольно! маршъ! երաժիշտները կսկսին թմբկահարութեամբ հեռանալ. իսկ գնդապետն ճանապարհի զգեստը կհագնի ու ամէն մէկու հետ շնորհակալ ըլլալով բարև մնայ կանէ. իսկ եղբօրը հետ համբուրուելով շնորհակալ կըլլայ և ի միասին երկուքը կերթան):

Գ. (Նստելով) Բարի երթաք. Աստուած բարի ճանապարհ տայ գործերուդ ալ յաջողութիւն:

Ա. (Հօրը ճակատը համբուրելով) Մ՛իշտ պարտական եմ քեզ խոնարհութեամբ ծա-



ռայելու և կամքդ կատարելու, սիրելի հայր իմ.

Գ. (Իւր աչքերը սրբելով) Ահ. սիրելի որդեակ իմ. աշխատէ քու հօրդ կամքը կատարելով մեր Աստուածապսակ Թագաւորին սիրտը չցաւցընել. վասն զի նորա կամքն ալ ա՛ն ժամանակ կատարուած կըլլայ, երբոր իրեն բոլոր արած կարգադրութիւնները մեզմով ճիշդ կատարուին. ասել կուզեմ, որ մեր ողորմած Թագաւորը ամենեւին մեզի զրկելու համար չէ այս նոր կանոն դրածը, հա՛պա, անոր հակառակ, մեր հանգստութիւնը և ուրախութիւնը երկարի տանելու համար է, որով ինքն ալ մեր վերայ նայելով կուրախանայ և պիտի ուրախանայ. ուրեմն նայէ գիշեր և ցորեկ աղօթքիդ մէջը չմոռնաս յի-

չելու մեր ողորմած Թագաւորին անունը:

Ա. Շատ լաւ, սիրելի հայր իմ, ամենևին խօսքեդ դուրս չեմ ելլեր. ([illegible]) իրաւ դու իմացա՞ր հայր իմ, որ հօր-եղբօրս որդին զինուոր գնաց. գիտե՞ս որը.

Գ. Չէ, ո՞րը:

Ա. Սարգիսը. Թէ և մանչի անգամ աչքէն արտասունք ելլար, բայց ես իրեն հաւատացուցի, որ ամենևին սիրտը թող չկոտրէ, վասն զի (հոգւոց) աղէկ միտք ընելու ըլլանքնէ, ինչու համար պէտի լանք որ. հապա, թէ որ մինչև այսօր հայոց Թագաւորութիւնը եղած ըլլար նէ, այն ատեն ի՞նչ պիտի ընէինք, զինուոր ըլլալու չէինք. ուրեմն պէտք է լաւ հասկանանք, որ մեր Թագաւորութիւնը



նոյն է, և Թագաւորը Օգոստոս կայսրն Ռուսաց Աղեքսանդր Բ. է: Ասկէց ի զատ, ով որ կմտածէ ու կաշխատի իր տան ապահովութեան համար նէ, նոյնը թող մտածէ, թէ մեր ամենուս տունն է Ռուսաստան և մանաւանդ այն տունն է, որուն մէջ որ ծնել ու մեծացել ենք, որ ուրիշ կերպով կասուի „հայրենիք:“ պէտքէ ուրեմն հայրենեաց սիրով վառուած պահենք ու պահպանենք մեր հայրենիքը. ([illegible]) Երբոր Սարգիսը այս խօսքերս լսեց, սիրտ առաւ ու մէկէն հօրն ու մօրը ձեռքերը համբուրելով ելաւ գնաց ազգականներուն հետ բարև մնաս ընելու. ասելով „հայրենիքը սիրողը, պէտք է հայրենեաց համար իր կեանքը և անձը զոհէ“. կարծեմ հիմայ այս

տեղ ալ կուգայ, թէև ամենէն ա-
ռաջ մեզի պիտի գար, բայց լաւ է,
որ մեր տունը հիւր ունինք, անոր
համար.....

## ՏԵՍԻԼ ԽԱ.

Սարգ. (Ուրախ դէմքով ներս կմտնէ ու հօրեղբօր
ձեռքը համբուրելով կ'ըսէ) Բարև կեցիք
էմճէ-պապա. այս վայրկեանիս պիտի
երթամ, վասն զի ինձ վիճակ ելաւ.
ես առաջ քեզ պիտի գայի, բայց
իմացայ որ միսաֆիր ունէիր, անոր
համար ուշացայ (Նորէն ձեռքը համբուրելով)
կաղաչեմ էմճէ-պապա, հօրս ու մօրս
սիրտը դու մխիթարէ, վասն զի նո-
քա չուզենալով լսել, որ այս ծա-
ռայութիւնը ամենուս սրբազան
պարտքն է, կուլան կողբան. (Կուլէ)



ինչ կայ, փառք Աստուծոյ ողջ
առողջ եմ, թէ որ Աստուած կամե-
նայ նէ չորս տարի ծառայութիւն կա-
նիմ ու կդառնամ կուգամ. գիտեմ,
այն ժամանակ պիտի ուրախանան,
բայց առ այժմ ամենևին ես նոցա
խօսք հասկացնելու չկրցայ (հօրեղբօր
ձեռքը դարձեալ համբուրելով) ուրեմն մնաք
բարև (Երթալու կելլայ):

Գ. (Սարգսին ետեւէն կերթայ կ'ելնէ ու աչքե-
րը սրբելով երեսը նորան կրկնելով): Աստուծոյ
օրհնութիւնը վրադ ըլլայ, այ որդի.
Աստուած քեզ կեանք և առողջութիւն
պարգևէ. (Սարգսին գլխէն համբուրելով).
երթաս բարև (ձեռքով կողմն ցուցնելով).
թող տեսնեն բոլոր մեր հայ մայրերը
հայրերը, որ մեր զաւակները մեզմէ
աղէկ հասկացել են, ինչ ասել է
հայրենիք ասելը և հայրենեաց սէրը

Ս. (Սարգսին հետ համբուրուելով) Բարի երթաս, սիրելի եղբայր իմ Սարգիս. միայն մի մոռանար, մեզ նամակ գրէ, մենք ալ միշտ պատրաստ ենք քեզ պատասխանելու. ուրեմն երթամ, քեզ ճանապարհ դնեմ: (Վարագոյրը կիջնայ)։

ՎԵՐՋ։